

ԱՆԱԳՐԱԿՈՂՅԱՆ
ԵՎԵԼԻՆԱ ԳՅՈՒԼԻՆԱԴԱՆՅԱՆ

ԸՆՏՐԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐ



ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ 2007



ԵՐԵՎԱՆ • 2009



Գիրքը հրատարակվել է
«Ժողովրդավարության դպրոց» նախագծի շրջանակներում
ժողովրդավարությանը աջակցության ազգային հիմնադրամի (NED)
օժանդակությամբ



Խմբագիր՝ Սոնա Մանուսյան

Անա Ժամակոչյան, Էվելինա Գյուլիսանդանյան
ԸՆՏՐՎԿԱՆ ԽճԱՆԿԱՐ. ԱշԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ 2007/.– Եր.: «Զանգակ-97»,
2009.– 128 էջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|-----|
| Հեղինակների կողմից | 4 |
| Նախարան | 6 |
| Introduction | 8 |
| 1. Մինչընտրական քաղաքական համակարգը Հայաստանում | 10 |
| 2. Հայաստանի հասարակությունը նախընտրական շրջանում | 28 |
| 3. Հասարակական կազմակերպություններն ընտրական գործընթացում | 52 |
| 4. Արտաքին ազդեցության գործոնը Աժ 2007-ում | 62 |
| 5. Աժ 2007 ընտրական իրողություններ | 69 |
| Ներքաղաքական իրադրություն | 69 |
| Նախընտրական կանխատեսումներ | 111 |
| Հովհանի Խուրշուջյան. Վերջաբանի փոխարեն | 120 |
| Hovsep Khurshudyan: Epilogue | 122 |

| | |
|---|-----|
| Հավելված. Աժ 2007 ընտրությունների հրապարակված արդյունքներ | 124 |
|---|-----|

© Հեղինակներ, 2009 թ.

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Արդեն ավելի քան երեք տարի ամենատարբեր մասնագիտությունների ու հայացքների տեր մի խումբ քաղաքացիներ պարերար հավաքվում են Երևանի գրադարաններից մեկի փոքրիկ սրահում, տեղեկատվություն փոխանակում, քննարկումներ ծավալում, քանավիճում հայաստանյան հասարակության արդիական խնդիրների շուրջ: «Դեմոկրատիայի դպրոց» կրովոյ այս Թինկ-թանկ (Think Tank) ծրագրի ներքո հյուրընկալվում են տեղական և միջազգային փորձագետներ, կիսում իրենց փորձը և գաղափարները: Ցուրաքանչյուր հավաք մի փոքրիկ ու յուրատիպ միջոցառում է, որտեղ ամեն մեկն ունի իր ասելիքը, և յուրաքանչյուրը պատրաստակամ է որոնել լուծումներ՝ համատեղ քննարկումների ու բանավեճերի արդյունքում:

«Դեմոկրատիայի դպրոց» մշտապես ակտիվ ու թեժ մթնոլորտը մեզ խթանեց «Ընտրական խճանկար. Ազգային ժողով 2007» փորձիկ գրքով յիշուր աշխատանք նախաձեռնել: Հասկացանք, որ ժամանակն է թղթին փոխանցել այն մտորումներն ու մտահոգությունները, որ կուտակվել են Դեմոկրատիայի դպրոցի մասնակցների մոտ: Մասնագիտական առումով այս չափազանց հետաքրքիր և քաղաքացիական առումով արդիական ուսումնասիրությանը ձեռնամուխ եղանք՝ հետազոտելով 2007 թ. ՀՀ Ազգային ժողովի ընտրական գործընթացը:

«Ընտրական խճանկար. Ազգային ժողով 2007» գրքով յիշելում ու հրապարակումը հնարավոր դարձավ բազմաթիվ մարդկանց հետ համագործակցության արդյունքում, ինչի համար շնորհակալ ենք՝

- Հայաստանում «Դեմոկրատիայի դպրոց» ծրագրի դեկավար տկնածին Բայանդուրին և ծրագրի համակարգող Ստեփան Դանիելյանին, ովքեր յուրահատուկ ստեղծագործական մթնոլորտ են ձևավորել Թինկ-թանկ ծրագրի շրջանակներում և խթանել են այս գրքով յիշելում աշխատանքները,

- «Դեմոկրատիայի դպրոց» մասնակից անդամներին, որոնց մեջ հատուկ ցանկանում ենք նշել հոգեբան Սոնա Մանուայանին՝ հետազո-

տական աշխատանքներին աջակցելու և գրքովի շուրջ իր անաշառ դիտարկումների համար,

- փորձագիտական հարցման բոլոր մասնակից քաղաքագետներին, լրագրողներին, կոսակցական ու հասարակական գործիչներին՝ իրենց ժամանակը սիրով տրամադրելու, մեզ հուզող հարցերին անկեղծ պատասխանելու և արժեքավոր տեսակետներ հայտնելու համար:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում ԱՄՆ «Ազգային աջակցություն դեմոկրատիային» (NED) հաստատությանը, որի շնորհիվ հնարավոր դարձավ գրքովի տպագրությունը:

Եվ վերջում, քայլ ոչ վերջին հերթին մեր երախտիքն ենք հայտնում Հայաստանի տարբեր քաղաքներում ու զյուղերում բնակվող բոլոր այն քաղաքացիներին, ովքեր մասնակցել են մեր կողմից իրականացված խմբային քննարկումներին և անհատական հարցագրույցներին, մեզ հետ կիսել իրենց մտահոգություններն ու քաղաքական նախասիրությունները:

Հուսով ենք, որ ԱԺ 2007 նախընտրական և ընթացքը քննարկող այս գրքովից հետաքրքիր կինի յուրաքանչյուր ընթերցողի համար, և որ գրքովի տեղ գտած նկարագրություններն ու դիտակումները կլրացնեն Հայաստանում 2007 թ. սոցիալ-քաղաքական գործընթացների մասին պատկերացումները:

**Աննա Ժամանակոչյան
Եվելինա Գյուլիսանդանյան**

ՆԱԽԱԲԱՆ

«Հնտրական խճանկար. Ազգային ժողով 2007» գրքովկը Հայաստանում 2007-ին տեղի ունեցած ընտրական անցուղարձի մասին է: Աշխատանքի առանցքն են կազմում երկրի առաջատար քաղաքագետների, քաղաքական գործիչների, վերլուծաբանների, ԶԼՄ-ների ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հարցազրոյցները¹, ինչպես և լրատվամիջոցներում նրանց հրապարակած տեսակետները՝ Հայաստանի իրականության և նախանշվող զարգացումների մասին: Փորձագետների գնահատականները քազմակողմանի են, փոխվրացնող, որոշ դեպքերում նույնիսկ իրարամերժ, քանի որ արտահայտում են քաղաքական համակարգի տարրեր կողմերի դիրքորոշումները: Աշխատանքում հեղինակները հիմնվում են նաև 2006–2007 թթ. ընթացքում իրականացված սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքում բացահայտված քաղաքական–ընտրական խնդիրներին առնչվող հասարակական կարծիքների և մտահոգությունների վրա:

Գրքովի առաջին մասում նկարագրվում են Հայաստանի դեռևս մինչընտրական շրջանի քաղաքական համակարգին բնորոշ այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ քաղաքականության մեջ ոչ ֆորմալ կանոնների դոմինանտությունը, իշխանության կենտրոնացումը, քաղաքական դաշտից ընդունության արտամրումը, քաղաքականության ապագաղափարականացումը և այլն, որոնք ինքնին սպառնալիք էին ընտրական գործընթացի կայացման համար:

Երկրորդ մասում հեղինակներն անդրադառնում են նաև հասարակության նախընտրական շրջանի ընկալումներին, ապաթիկ տրամադրություններին, ընտրական ինստիտուտի նկատմամբ վստահության ցածր

մակարդակին, պետական և քաղաքական գործընթացներից հասարակության մեջ առկա օտարվածության, անզորության զգացումին, արտաքին ու ներքին սպառնալիքների նկատմամբ տիրող վախի մթնոլորտին:

Աշխատանքում նկարագրվում է նաև ԱԺ 2007 նախընտրական գործընթացում հասարակական կազմակերպությունների առանձին գործունեության ձևերը և այդ գործընթացում նրանց ունեցած համեստ դերակատարումը, ինչը պայմանավորված էր հիմնականում ֆորմալ իրականության տրամարանությամբ մշակված ծրագրերով կամ «կղզիացած» աշխատանքով:

Գրքովի չորրորդ մասում տեղ են գտել նաև ընտրական գործընթացի վրա արտաքին աշխարհի ազդեցության մասին տեսակետներ, որոնք արձանագրում էին Հայաստանի խորացող կախվածությունը Արևմուտքից և Ռուսաստանից և միաժամանակ վկայում Հայաստանի հանդեպ Արևմուտքի նվազող հետաքրքրության և ժողովրդավարության սղությամբ մտահոգության բացակայության մասին:

Եվ վերջում ԱԺ 2007 ընտրական իրողությունների նկարագրությունը ներկայացնում է թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր քաղաքական կուսակցությունների մասնակցության բնույթը ընտրական գործընթացում, նրանցից յուրաքանչյուրի դիրքավորումը քաղաքական համակարգում, ինքնաներկայացման տեսանկյունը, նախընտրական քարոզարշավի ձևերը, ընտրակաշառքի տարածվածության խնդիրը, ընդդիմադիր կուսակցությունների փոխադարձ ընկալման ու համագործակցման խնդիրները, ինչպես նաև հնարավոր ընտրակելողիքների և ընտրական գործընթացի կայացման մասին կանխատեսումները:

Գրքովկը նպաստակ ունի լրացնել Հայաստանում 2007 թ. սոցիալ–քաղաքական գործընթացների և ընտրական ինստիտուտի մասին ընթերցողների պատկերացումները և ուղղված է ընթերցողների լայն հանրությանը:

¹ Հարցազրույցներն անցկացվել են 2007 թ. ապրիլ–մայիս ամիսներին, և փորձագետների տեսակետներն արտացոլում են երկամսյա այդ ժամանակաշրջանում իրենց արտահայտած գնահատականները, որոնք հետագայում կարող են փոփոխված լինել: Տերություն փորձագետները ներկայացված են հարցազրույցի պահին իրենց ունեցած կարգավիճակով:

INTRODUCTION

The booklet “Electoral Mosaics” is about the electoral developments of National Assembly of Armenia in 2007. The pivot of this work is the interviews² with leading political analysts, political figures, representatives of mass media and non-governmental organizations, as well as their opinions about the Armenian reality and foreseen developments which had been published in mass media. Those assessments are versatile, mutually complementary, in several cases even mutually exclusive, since they express positions of different parts of the political system. The authors of the booklet also refer to public opinions and concerns related to political and electoral issues based on sociological researches conducted over the period 2006–2007.

The first part of the booklet presents issues typical for pre-electoral Armenia’s political system such as the dominancy of non formal rules in politics, the centralization of authority, the exclusion of opposition from political field, deideologization of politics, and a number of other issues, being themselves a threat for the accomplishment of electoral process.

In the second part the authors present public perceptions in pre-electoral period, the apathetic moods, the low level of credit towards the electoral institution, aloofness from state and political processes among society, the feeling of feebleness, and the atmosphere of fear towards external and internal threats.

The research also describes forms of separate activities of NGO-s and their modest role in the 2007 National Assembly pre-electoral process, which was the result of their programs being tailored mainly by the logic of formal reality or due to the isolated work of each of them.

The forth part of the booklet includes viewpoints about the influence of external world on electoral process, stating the deepening dependence of Armenia from the West and Russia and at the same time affirming the failing interest of West towards Armenia and absence of concern about the lack of democracy.

And finally, the last part comes with the description of realities of the National Assembly 2007 elections, presenting the nature and form of participation of both state and oppositional political parties in the electoral process, the positioning of each of them in political system, their viewpoint of self-presentation, the issue of prevalence of electoral corruption, the issues of mutual perception and cooperation of opposite parties, as well as forecasts about possible electoral violations and the accomplishment of elective process.

The booklet aims to expand the knowledge of readers about the social and political processes in Armenia in 2007 and electoral institute. It is addressed to the wide audience of readers.

² The interviews were conducted for the period of April and May 2007, and viewpoints of experts reflect the evaluations made by them during this period, which may have been revised by them later. In the text, the experts are presented according to their status at the time of the interviews.

1. ՄԻՆՉԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հնտրական շրջանում սոցիալ-քաղաքական ինստիտուտների դիտարկումը բացահայտում է երկրի ներուժը, ուրվագծում նրա զարգացման ուղղնիշը: Այս ընթացքում գործընթացներին մասնակից բոլոր կողմերը ներկայանում են իրենց ընորոշ հատկանիշների առավել վառ դրսուրումներով, հասարակության մեջ ընդգծվում են սոցիալական խնդիրները, առաջ են զայս դրանց հաղթահարմանն ուղղված հնարավոր մեխանիզմները: Հայաստանի պետ նոր-նոր ժողովրդավար ուղին բռնած պետությունների համար ընտրությունները նաև հերթական քննություն են, որի անցողիկ միավորը նշանակում է պատմական առաջնաբաց ու զարգացում, իսկ ձախողումը՝ արատավոր կանգառ ու հետընթաց:

Հայաստանում բուն ընտրական գործընթացները, այդ թվում՝ 2007 թ. Ազգային ժողովի ընտրությունները հասկանալու համար նախ հարկ էր դիտարկել ու նկարագրել երկրի քաղաքական համակարգի այն ընդհանուր համատեքստը, որում էլ ընթացան նախընտրական և ընտրական զարգացումները:

Քաղաքական դաշտի նկարագրությունը հարուստ էր բազմակողմանի և անշուշտ հույսական մոտենցումներով, քանի որ մենք միաժամանակ այդ համակարգի թե՛ դիտարկողներն էինք և թե՛ համարարման մասնակիցները: Մի կողմից քաղաքական փաստերն օրինաչափ էին, մյուս կողմից՝ բոլորս բնականորեն մտահոգվում էինք, վրդովվում և օրյեկտիվ իրողությունները համեմում սուբյեկտիվ վերաբերմունքով, հաճախ նաև՝ հակադիր արժնորումներով ու դիրքորոշումներով:

Երկիրը թևակոյսում է բարեկիրտումների երկրորդ փող և հիմա հսկակ վերցրել է զարգացման վեկիոր թե՛ ընկրեսության մեջ, թե՛ քաղաքականության մեջ, և դրա վառ օրինակն է 2005 թ. նոյեմբերին պեղի ունեցած Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեն: Երկիրը հսկակ գնում է դեպի եւրախնդերու:

**Եղուարդ Շարժագանով
Հայաստանի հանրապետական կուսակցության մամլո խոսնակ**

Դիրեք, աշխարհը անընդհապ փոխվում է, քայլ մեր քաղաքական մրածողությունը մնում է 1988 կամ 1990-ականների մակարդակին: Այս ժամանակ իմադիրներ կային, և դրանց համապատասխան որոշակի քաղաքական լեզու կար: Այժմ գրեսանելի չէ, թե այն ժամանակից մինչև հիմա դրանք ինչպես են վերածնակերպվել: Իրականում չեն վերածնակերպվել, որովհետո երկրում չի եղի ներքին քաղաքական պրոցես: 1996-1998 թվականներից ու առաջին ընկրակեղծիքներից սկսած քաղաքական պրոցեսի փոխարեն սկսվեցին այլ պրոցեսներ ընթանալ, և մենք քննականաբար հերթ ենք մնում, որովհետո աշխարհի մարդարավերներին չենք հասցնում պարասախան դրալ:

Հրանտ Տեր-Արքահամյան
ԱԺ 2007 պարզամավորության թիկնածու
«Բնափական» դաշինք

Այսպիսի հակադիր մոտեցումները բոլորովին չին հեռացնում մեզ իրականությունից, այլ հակառակը՝ իրականության կառուցակցման յուրօրինակ հիմքն էին կազմում, քանի որ դրանցից էին հաճախ բխում դերակատարների հետագա ուազմավարություններն ու գործողությունները: Ահա թե ինչու մենք չենք խոսափում ներկայացնել սուբյեկտիվորեն համարարվող իրականության տարրեր կողմերի՝ քաղաքական կուսակցությունների, փորձագետների, ՀԿ-ների ու քաղաքացիների դիտարկումները՝ համադրելով և լրացնելով դրանք:

Քաղաքական դաշտի տարրեր կողմերում գտնվողների իրարամերժ կարծիքները հաճախ պայմանավորված էին նրանով, թե դիտարկվող օրյեկտը «իրական»՝ ոչ ֆորմալ, թե «հոչակված»՝ ֆորմալ Հայաստանն է: Այն դեպքում, եթե Հայաստանի իրական քաղաքականության դաշտը լուրջ տարակարծությունների առարկա էր, երկրի զարգացման ֆորմալ ուղղվածության շուրջ քաղաքական բանավեճ առհասարակ չէր ընթանում, և բոլոր քաղաքական ուժերը համակարծիք էին Հայաստանի ժողովրդավարական զարգացման, եւրոպական ինտեգրացիայի հեռանկարին:

Այսօր գոյություն ունեցող ամենամեծ հակադրությունն այն է, որ ներկայի Հայաստանը և ապագայի Հայաստանը, որ խոսրանում է իշխանությունը, հանգավոր Հայաստանն է, կամայականության Հայաստանը: Ընդդիմությունը շատ բանիք փաստարկելու կարիք չունի, քանի որ այսօր դեպի ունեցող իրադարձությունները դրա լավագույն ապացույցն են՝ «ուազորկա-

ներ», կրիմինալ վիճակ և այլն: Հասարակության գնահատականներն այդ առումով համեմայն դեպք են:

Սրբության Մաֆարյան
ԱԺ 2007 պարզամափորության թեկնածու
«Ժառանգություն» կուսակցություն

Իշխանությունն էլ զնում է դեկլարատիվ բաների, որ աշխարհի, ընդդիմության ու ժողովրդի առջև մի քիչ լավ երևա, առաջարկում է ծրագրեր՝ ժողովրդավարացում և այլն, որոնք, իրենք էլ գիրեն, ամենամեծ ցանկության դեպքում էլ չեն կարող իրականացնել իսկ եթե չգիրեն՝ ավելի վայ իրենց համար:

Արծության Փեամանակ
քաղաքական մեկնաբան

Եթե ծրագրերի վերլուծություն անենք, ակնհայտ կդառնա, որ մեր քաղաքական ուժերը՝ առնվազն կարուր տեղերում գլուխողները, ծրագրերի դրահաջություններ ընդհանրապես չունեն՝ բացառությամբ արդարին քաղաքականության ոլորտում որոշ շեշտադրումների: Դրանով դարձեր բառերով գրեթե նոյն բանն է գրված: Սակայն իրականում մեզ մոտ կան ուժեր, որոնք փորձում են ծեղոք զցել վարչական ռեսուրսներին, ինչը բերում է որոշակի իշխանություն, քննիչների օգույքներ, հասարակական ձանաշխում: Սա է նրանց հիմնական մոդիվացիան:

Տիգրան Զրբաշյան
AEPLAC հայաստանական գրասենյակի դեկանար
դրահանդեսագետ

Ընդ որում, «հոչակված» և «իրական» Հայաստաններին խորը անջրաբետ էր քամանում: Լուրջ խնդիր էր դիտվում այն, որ քաղաքական ինստիտուտների ֆորմալ գործունեությունը չափազանց հեռու է իրական և ոչ ֆորմալ էությունից: սահմանադրությունը որպես ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն հոչակված Հայաստանի քաղաքական դաշտը առավելապես բնութագրվում էր «ապաքաղաքական» ու «բակային» մշակույթի աստրիբուտներով: Ուստի «քաղաքական» հասկացությունը մեզանում կիրառելի էր վերապահումով:

Հասական քաղաքականությունը Հայաստանում չի աշխարհում: Հայաստանում քաղաքականությունը չկա, քաղաքական ուժեր չկան և քաղաքական

գործիքներ էլ չկան: «քաղաքականություն» գրեթինը Հայաստանում պիտի չօգտագործվի:

Արծության Փեամանակ
քաղաքական մեկնաբան

1988-ին մեր մշակութային վերելքն էր: Դա ոչ միայն ազգային-ազագրական զարդարն էր, դա մշակութային զարդարն էր, որովհետու մարդիկ զգացին ազագության շունչը, իսկ ազագությունը մշակույթ է, մշակույթի հիմքն ազագությունն է: Հայաստանում այսօր դա չկա, դրա համար էլ ունենք այդպիսի գործ մշակույթ, նաև գործ քաղաքական մշակույթ: Պատշաճնարկում դեռևս էլ ինչ մակարդակի խոսակցություններ են տեղ գրնում, ինչպես են իրար հետու շփվում, ինչպես են քվեարկում՝ իայլարան մշակույթ: Եվ նոյն էլ գործադրության մեջ է, որպես ընդհանուրապես մշակույթ չկա: Մինչդեռ արդի գործադրությունը բարձր կարգավորվող հարաբերությունն է հարկադրություն և պետքություն՝ որպես հարկ արացողի միջև: Եվ մարդը իիդա ունի նաև գործադրության հարաբերություններում, այլ ոչ քե ազահարար փորձում է լավել հարկերից խոսափել: Եվ դա միայն նրա համար, որ հեկու մի երկու բարեգործական ակցիան անի և ամրող օրը դա ցուցադրի, որպեսզի վաղը նրան ընկրեան, որ նորից բալանսի:

Հոգևոր Խորշուոյան
«Ժառանգություն» կուսակցության մամլո խոսնակ
քաղաքագետ

Հեռևս դարիներ առաջ՝ 1997–1998 թթ., մենք կանխարիսկ էինք, որ Հայաստանում քաղաքական համակարգը զնում է օլիգարքիկ և ոչ թե քաղաքական ուժերի մրցակցության ճանապարհով: Հեղազայում դեղի ունեցած բոլոր ընկրությունները ցույց տվեցին, որ օլիգարքները ասրիմանարար միքնում են քաղաքականություն, Ազգային ժողովը և քաղաքական համակարգը խիստ սերպաճած է դառնում օլիգարքիկ համակարգին:

Սրբության Մաֆարյան
ԱԺ 2007 պարզամափորության թեկնածու
«Ժառանգություն» կուսակցություն

Մեր քաղաքական համակարգը դեռևս չնավորված չէ, ժողովրդավարական ավանդույթները մեզ մոտ ընդամենը 15 տարեկան են, իսկ այս ընթացքում հնարավոր չեն անցնել այն մեծ փուլը, որը դասական ժողովրդավարական երկրներն անցնել են գրեթե մեկ հարյուրամյակի ընթացքում:

Էղուարդ Շարմազանյան
Հայաստանի հանրապետական կուսակցության մամլո խոսնակ

Քաղաքական իրավիճակ կարող է լինել եթե իշխանությունը օրինական ձևանապարհով է եկել և ունի լեզվիմ ընդդիմություն՝ քաղաքական փոքրամասնություն, որի հետ ունի գարածամություններ, գաղափարական առանձնահավաքություններ: Եթե խոսքի ազագություն չկա, իսկ Հայաստանում այն չկա, այսինքն՝ էլեկտրոնային ՁԼՄ-ները ազագ չեն, կամ գրապահը ընդդիմադիր մասնությ հասանելի չէ լայն գանգվածներին, եթե քաղաքական մեկ այլ իրավունք, ինչպիսին հավաքների և միավորումների իրավունքն է, ևս խափառած և որևէ քաղաքական դաշտը, ըստ էության, գրնալում է ընդհագույն վիճակում:

Հայաստանում, ըստ էության, քաղաքական պրոցեսները գրեղի են ունենում միայն ընդդիմության դաշտում: Այն, ինչ կարարվում է դրանից դուրս, քաղաքական պրոցեսն անվանել չի կարելի: Քանի որ, ըստ մեր համոզման, իշխանությունը յուրացված է սահմանադրության երկրորդ հոդվածի դիսպոզիցիայով, ուստի իշխանությունը քրեական էլեմենտներ են: Իշխանությունը զավրված է կրիմինալի, մի քանի ընդգանձիք կամ մի կրիմինալ սինդիկատի կողմից: Այն, որ իշխանությունը յուրացված է, այլև քաղաքական գնահատական չէ, սա գերբնի է, որ մեջքերված է նաև կոռուպցիային վերաբերող գեկուցում: Ուստի Հայաստանում քաղաքական հարաբերություններ չկան: Կա ընդդիմության՝ որպես պարզիզաների հանդեպ վերաբերմունք:

Արդար Զեյնայյան
ԱԺ 2007 պարզամափորության թեկնածու
«Հանրապետություն» կուսակցություն

Պրոբեմն այն է, որ մենք շարունակում ենք ֆորմալ և ոչ ֆորմալ ինսպիրատուրի վեճը: Ֆորմալ ինսպիրությունը կոչվում է քաղաքական համակարգ՝ ժողովրդավարություն, սակայն իրավանում այդ ֆորմալ ինսպիրությունը գործում են ոչ ֆորմալ իսպիրատուրի վեճը: Այսօր մենք չունենք այն քաղաքական համակարգը, որը ինսպիրությունը նորմալ գործունեությամբ հնարավորություն կրաք դուրս բերել քաղաքական և հասարակական զարգացման արդյունավելի՝ ժողովրդավարական նորմելը: Ընդհակառակը՝ մենք ունենք զաղափարներից, ծրագրերից կամ մողելներից գարքերվող քաղաքական համակարգը: Իշխանության հիմնական հավակնորդները քաղաքական ակտոր չեն, նուան մոդիվը դնակնական է: Եթե վեճերն ընթանում են վարչական լծակներին պիրանալու շուրջ, դժվար է դրանք կոչել քաղաքական վեճ: Անզան այն քաղաքական ուժերը, որոնք հավանում են լինել զա-

դափարական, սրբեղծված իրավիճակից դրդված սկսում են կապվել այդ դրնիսական խմբերի հետ, որովհետո խաղի կանոններն այդպիսին են:

Տիգրան Ջրաշյան

AEPLAC հայաստանական գրասենյակի ղեկավար
դրնիսագել

Իսկ այնտեղ, որտեղ քաղաքական ինստիտուտներն ու դերակատարները գործառնում են ոչ ֆորմալ նորմ-կանոններով, հասարակության մասնակցությունը քաղաքականությանը ևս դառնում է թույլ ու աննշան, իսկ վերաբերմունքը՝ ապարիկ ու ապաքաղաքական: Խոսքն այստեղ այն ապաքաղաքականացման մասին չէ, որը բնորոշ է արևմտյան շատ երկրների, որտեղ քաղաքականության հանդեպ հասարակական հետաքրքրության նվազումը երբեմն նույնիսկ սպառնում է ընտրությունների կայացմանը: Օպտիմալ գործառնող համակարգերում քաղաքացին հնարավորություն ունի մասնակցել քաղաքական գործնթացին ցանկացած պահի, բայց և իրավունք ունի չմասնակցել, եթե իրերի դրությունը իրեն չի հուզու: Մեզ նման հասարակություններում ձիչու հակառակն է: Քաղաքականությունը հուզում է ամենքին, բայց վերաբերում է ոչ բոլորին: Մինչընտրական Հայաստանում ևս քաղաքականությունը, վերջին հաշվով, չէր առնչվում հասարակության լայն զանգվածների շահերին: Սա եր պատճառը, որ երկրի քաղաքական դաշտը բնորոշվում էր նաև ընեռացվածությամբ ու հանրության համար անմատչելի՝ այսպես կոչված «վերնախավային» դրսնորումներով:

Բոլորը զգում են, որ մեկուսացված են. քաղաքականությունն ու իշխանությունը իրենց համար են ապրում, ժողովուրդն իր համար:

ՀՀ քաղաքացի, ք. Երևան

Իշխանության սեպմենտների համար պայքարը ընթանում է ոչ թե քնակշուրթյան լայն զանգվածների շրջանում, այլ վերնախավերի միջն՝ բիզնես վերնախավ, պետքական, մի քիչ էլ՝ ինտելեկտուալ: Քաղաքականության մեջ զանգվածները միշտ չեն ներգրավված, վերջիններս ներքաշվում են քաղաքականություն միայն ընդդրական ժամանակաշրջանում ծայներ ներգրավելու, քվե գմելու փորձերի միջոցով:

Արքասանդր Խականդարյան
«Կովկասյան լրաբանիչոցների ինսպիրութիւն» լրության
քաղաքագել

Պիդի փոքրամասնության՝ ընդդիմության հնարավորությունների դաշտը հեղինակ մեծացվի, քաղաքական համակարգը դառնա ավելի բալանսավորած, քաղաքական դաշտը Հայաստանում չընեացվի: Մենք հաճախ խոսում ենք սոցիալական բնեացվածության շարիքների մասին, սակայն դրա հիմքում ընկած է քաղաքական բնեացումը, որից չենք կարողանում ազագութեա:

Արմեն Ռուսամյան

4-րդ գումարման ԱԺ պարզամավոր
«Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցություն³

Ըստ որում, իշխանական վերնախավը հիմնականում կազմված էր վարչական, տնտեսական և ուժային ռեսուրսներին տիրապետող դերակատարներից, որոնց դերակատարությունը որոշվում էր հենց այդ ռեսուրսների նկատմամբ հատուկ մատչելիությամբ:

Քաղաքական հիմնական դերակարգությունը նախարարներն են, բարձրաստիճան կուսակցական գործիքները, գեներալները և այլն: Դրանք նաև իրենց կցած կամ մրավորված խոշոր բիզնեսի ներկայացուցիչներն են, ովքեր շատ հաճախ նույնանում են. մարդք միաժամանակ և քաղաքական գործիք է, և խոշոր բիզնեսներ: Երկիրը փոքր կարգանդակ է, իսկ կյուրներ բաժանելու տեղը քաղաքականությունն է: Վերնախավները միաշուրջ են, իրար հեր կոռուպցիոն կապերով կապված, նրանց միջն մի կողմից կառողակի կոնսենտուս, մյուս կողմից՝ մրցակցություն:

Անքասանդր Խոկանդայան

«Կովկասյան լրատվամիջոցների հնարիվութիւն» գլոբալ քաղաքագույն

Ես այդ ուժերը կուսակցություն չեմ անվանի, դրանք իրենց չեն կուսակցություն, ոչ թե բովանդակությամբ. դա կառավարման բիմն է՝ աղմինիսագրադիմ ռեսուրսը. կուզեք՝ անունը դրեք հանրապետության «վերնախավ», որին կամ քաղաքական գործիքներ, չինովնիկներ, բիզնեսներներ, գողականներ և այլն՝ կախված, թե ով ինչ լծակ ունի: Նրանք պիտի ինչ-որ կազմակերպչական չեն սրանան, իսկ քանի որ սահմանադրության մեջ

³ Արմեն Ռուսամյանը միակ փորձագետն է, ում հետ հարցազրույցը տեղի է ունեցել ընտրություններին հաջորդող օրերին, երբ արդեն հրապարակված էին ՀՀ 4-րդ գումարման Ազգային ժողովի ընտրությունների արդյունքները: Մյուս բոլոր մասնակիցները իրենց տեսակետները հայտնել են նախընտրական շրջանում:

գրված է, որ ընկրություններին մասնակցում են կուսակցությունները, նրանք իրենց անունը դրել են կուսակցություն: Եթե օրենքով սահմանվեր, որ ընկրություններին մասնակցում են մարզական ֆեդերացիաները, նրանք կկոչվեին մարզական ֆեդերացիա: Դա հանրապետության իշխանությունն է, այն մարդիկ են, ովքեր պետքության կանքում որոշումներ են կայացնում: Եվ սա ոչ միայն ֆորմալ առումով, չէ՞ որ ֆորմալ առումով որոշումներ կայացնում են ԱԺ-ն ու կառավարությունը: Իսկ մենք գիտենք, որ քաղաքակերն էլ են որոշումներ կայացնում, դրա համար քաղաքակերն էլ են կուսակցական, գողականներն էլ են որոշում կայացնում, թե որ «բուդայից» ինչքան ոնկեր անեն, դրա համար իրենք էլ են կուսակցական:

Արմեն Քաղաքասարյան

«168 ժամ» թերթի փոխխմբագիր
քաղաքական մեհմարան

Զանի որ քաղաքական համակարգը քանդված է, արժեքային համակարգը քանդված է, բնականարար վարչական ռեսուրսների գործունեալ շատրութեա: Զևս դոմինանդապային ուժեր, որոնք կարող են շոգեքարշի դեր կարգարել ամբողջ հասարակության համար: Հայաստանում իշխանական ռեսուրսի չեալիության համար որոշիչ դեր կարգարում են վարչական ռեսուրսները:

Երվանդ Բողոյան քաղաքագույն

Մենք մի անգամ հայտարարել ենք, որ Հայաստանը շատ լուրջ խնդիր ունի վերջնական պլուրուլրապիա՝ հարսկության իշխանություն չընկենու: Պլուրուլրապիայի դրանուրումները սկսում են հենց ընկրագան գործընթացից: Մի՞թե պլուրուլրապիա չէ, որ փողով առնում են մեկի փոքր իշխանությունը, իեւր սրանում են քո գումարային իշխանությունը: Արացվում է, որ ես ինչ համար փողով առնում եմ մի մեծ դաշտ իշխանության մեջ:

Արմեն Ռուսամյան

4-րդ գումարման ԱԺ պարզամավոր
«Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցություն

Հայաստանի մինչընտրական քաղաքական համակարգի անառողջության մյուս կարևոր ցուցանիշն այն էր, որ չէր գործում իշխանության բաժանման սկզբունքը. իշխանությունը բնորոշվում էր կենտրոնացվածությամբ: Ապահովված չէր օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների իրական անկախությունը: Մասնավորապես, օրենսդիր Ազգային ժողովը իրենց տեսակետները հայտնել են նախընտրական շրջանում:

յին ժողովը դարձել էր գործադիրի կամքն օրինականացնող կառույց, իսկ դատական իշխանության կախյալ գործունեությունը հանգեցնում էր նրան, որ սահմանված խաղի կանոնները համընդհանուր բնույթ չունեին. համակարգում կային արտոնյալներ: Եսկ ստվրաբար իշխանության կենտրոնացման արդյունքում կախյալ են դառնում նաև քաղաքացիական հասարակության ինստիտուտները և հատկապես զանգվածային լրատվամիջոցները, ինչպես նաև խաթարվում է կարևոր քաղաքական ինստիտուտների՝ մանավանդ ընտրական ինստիտուտի աշխատանքը:

Հայաստանում քաղաքական համակարգը կայացած չէ, և իշխանությունները ամեն ինչ անում են, որ չկայանա, որովհետո կայացած համակարգում գործում է արդյունավետ մեխանիզմ, որը են արժանին է դաշտում դեկազր: ոչ թե ուժայինը, այլ ինկապես ուժեղը՝ քաղաքական իմաստով:

Հովսեփ Խորշուրյան
«Ժառանգություն» կուսակցության մամայ իտունակ
քաղաքագել

Որպեսզի լինեն քաղաքական գործընթացներ և ընդուրություններ, պետք է լինի անաշառ արդարադարձության համակարգ: Այն Հայաստանում գոյություն չունի, ենթասար անհերեր է խոսել ընդուրությունների մասին և երազակիցներ ունենալ: Հայաստանում մի վիճակ է, երբ ներկային ընդդիմությունը հավակում է ինչ-որ բրերի՝ օրենքներ, սահմանադրություն: Մրածում է, որ եթե բրերի վրա գրված է, թե ընդուրություն կամ սահմանադրություն կամ դա բավարար է, որ փորձեն ըստ այդ գրվածքների կարարել իշխանափոխություն: Կյանքը ցուց է բավիր, որ դա հնարավոր չէ: Այդ բրերն իրականում ուժ չունեն, որովհետո դարձարան չկա, որովհետո դրանք չեն գրվել երկու կամ մի քանի գրեթե հավասար ուժերի համաշայնությամբ, որ եթե մեկը իսկապէս մյուսը պատճի նրան: Բոլոր լծակները գործադիր իշխանության ծնորում են, և ինքը իշխանությունը չի կամ ուրիշին:

Արծունա Պետականական քաղաքական մեջնաբան

Նկարած կյանքը, որ մի շարք կուսակցությունների գոյությունը հնարավոր է միայն հեռուստագրասեղմանների վրա: Ընդուրողների հետ նրանց կապը հեռուստագրեային է, իսկ զաղափարական հայեցակարգը ներկայացվում է միայն հարցագրույցի ժամանում: Սա նշանակում է, որ հեռուստագրեայունը և ՁԼՄ-ներն ընդհանապես դարձել են իշխանության աղբյուր:

Հեռուստագրեային արդահայրշամիջոցները հաճախ օգտագործվում են ոչ թե իրականությունն արդացողելու, այլ վերածնելու նպականություն:

Արա Շիրմայան

«Այլախոհության սպանություն ուղիղ երերում»

http://www.echannel.am/?topic_id=309

Փետրվար 4, 2007

Մյուս անհանգույցներուն հանգամանքը և Հայաստանի ներկայիս քաղաքական համակարգի համար լրացույն մարդարավերը դեռ մնացել է ազատ իտուքը և ընդուրական ինսպիրուությունը: Յավոր սրբի, սահմանադրական հանրաքեցից անմիջապես հեկո կարող ենք արձանագրել որ Հայաստանում ընդուրական համակարգը ամբողջովին ջախջախված, սպանված վիճակում է, չկա ընդուրություն: Մինչ այդ էլ առավել անհանգույցներուն էր զանգվածային լրատվամիջոցների և առհասարակ ազատ իտուքի սահմանափակումները: Այս ամենը հանգեցրել է մրցակցության անհավասար պայմանների, և քաղաքական ընդդիմությունը, կամ այլ կերպ ասած՝ քաղաքական համակարգի քաղաքական հավաքածքը գործադրություն է անհամեմատ քիչ ուսուրաների՝ իր պայքարը շարունակելու համար:

Մրցական Սաֆարյան

ԱԺ 2007 պարզամանակության թիվնածու
«Ժառանգություն» կուսակցություն

Իշխանության կենտրոնացման պայմաններում, երբ չեր գործում քաղաքական հակակշխոների մեխանիզմը, առաջնայնությունը տրվում էր ոչ թե քաղաքական ինստիտուտների ֆորմալ ֆունկցիաներին, այլ կարևորվում էր բրգածն իշխանության գագաթին կանգնած՝ ոչ ֆորմալ կանոնները հաստատող քաղաքական դերակատարների կամքը: Հետևաբար, վերջինս դարձել էր Հայաստանում քաղաքականության իրականացման առաջատար գործոն և ուղղորդում էր սոցիալ-քաղաքական գործնքացները:

Ոչ որ դերակարգարություն չունի, բացի իշխանությունից, որը խորհրդային պետությունից ժառանգել է իշխանական ահրելի մեծ կառույց՝ ուժային, աղմինիսպրավիլ լծակներ, որոնցով պահում է երկիրը: Դրանք մարդիկ են, որոնց հակակշռող ոչինչ գոյություն չունի, դրա համար իրենք ինչ ուզեն՝ կարող են անել. կարող են 37 թիվ սարքել Հայաստանում, ու ոչ ոք նրանց

Ճեղքը չի բռնի: Ամեն ինչ դրված է իշխանությունների՝ բարձրագույն պաշտոնական պաշտոնական հաղորդական լուսական հաղորդական լուսական:

Արժուան Թեազնյան քաղաքական մեջնաբան

Անկեղծ լինելու համար ասեմ, որ այսօրվա իշխանությանը ռեալ հակալ-շիո ուժ չեն կրենում: Հայապանում իշխանությունը միշտ շատ ուժեղ է, քանի որ կարողանում է արդյունավեր օգտագործել իր բոլոր վարչական լծակները:

ԱԺ 2007 պարզամավորության թեկնածու
«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն

Իշխանությունը օգտագործում է ֆիզիկական ոչնչացման, մարմնական հաշվի հարդարդարի, բարբեր քաղաքական գործիչների նկատմամբ ծեծել-ջարդելու պատրան վերցնելու մեթոդը: Այսօր մենք բանդերում ունենք մարդիկ, ովքեր պատրանի կարգավիճակում են: Իրավական կոչվող մեր երկրում կարող են (ամօրինական կերպով – հեղ) գաղղման ընդունակությունը կամ արմադական ընդդիմադիր կուսակցությունների գրասենյակներն ու գործիչներին:

Արփակ Զեյնայյան ԱԺ 2007 պարզամավորության թեկնածու «Հանրապետություն» կուսակցություն

Արդյունքում անորոշ էր դարձել ընդդիմության տեղը քաղաքական դաշտում: Ընդդիմությունը, որը դեմ էր հանդես գալիս գործող համակարգին, կորցրել էր քաղաքականության սուբյեկտին բնորոշ ակտիվ դերակատարությունը՝ ավելի նմանվելով կրավորական օրինակի: Նման իրավիճակում առողջ իշխանափոխություն դժվար էր պատկերացնել, փոխարենը ընտրական գործընթացների քաղաքական մրցապայքարից վերածվել էին «հակամարտության»:

Հայաստանում այս, ինչ կոչվում է ընդդիմություն, ոչ թե քաղաքական, այլ համակարգային ընդդիմություն է: Նրանք ոչ թե մերժում են քաղաքական այս կամ այն ուժը, այլ ողջ համակարգը՝ սահմանադրության, նախագահի, Ազգային ժողովի լեզվիմությունը: Ընդդիմությունը, իհարկե, քաղաքական քաղաքանի մաս չէ, այն դուրս է ոչ թե քաղաքականությունից, այլ քաղաքական վերահսկությունից: Նրանք ինքնակամ կամ պարտադրված կերպով դուրս են մղված որոշումներ կայացնելու գործընթացից, ասենք՝ ուստի՛ ա

ու երթուղային գծեր բաժանելու «ուազբորկայից»: Այս իմաստով նրանք կոնսենսուսի անդամ չեն:

Ակերաանդր Խականաբարյան, «Կովկասյան լրագրամիջոցների ինսպիրությի» տնօրին քաղաքագել

Հիմնական հակամարդության մեջ են մի կողմից իշխանությունը՝ Քոչարյան-Սարգսյան դանակներ՝ իրեն սպասարկող «Նիգ Ապարան», «Քարգավաճ Հայաստան», «Հանրապետական» կառույց արդանյակներով, մյուս կողմից՝ ժողովուրդը և ժողովորդի կողմից կազմակերպված միավորները՝ «Հանրապետություն» կուսակցությունը, «Իմաշխմենիք» դաշինքը, «Հայոց համազգային շարժումը» և մի քանի հասարակական կազմակերպություններ, որոնք փորձում են պաշտպանել իրենց ոչ թե քաղաքական, այլ քաղաքացիական իրավունքները: Մրանք են հակամարդուղի կողմները. մի կողմում զավթիչներն են, մյուս կողմում այլք:

Արփակ Զեյնայյան ԱԺ 2007 պարզամավորության թեկնածու «Հանրապետություն» կուսակցություն

Հայաստանում դժբախտաբար քաղաքական համակարգն այնքան առողջ չէ, որ ընդդիմության գործունեության համար արդյունավեր դաշտ լինի: Ըստ կարևոր է զնահարել վրայ քաղաքական համակարգի առողջությունը, թե որքանով է դրանում հնարավոր ընդդիմության գործունեությունը: Այդ հնարավորությունը փոքր է, ցանկացած ընդդիմության համար գործունեության դաշտը նեղ է: Օրինակ՝ Ազգային ժողովում փոքրամասնությունն այսօր օրենքների ընդունման և քաղաքական պրոցեսների վրա ազդելու շաբաթ քիչ հնարավորություն ունի:

Արմեն Ռուստամյան 4-րդ գումարման ԱԺ պարզամավոր «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցություն

Հիմնական քաղաքական ակտուրները երկուսն են՝ Ռոշարյանը և Սերժ Սարգսյանը: Նրանք իրենց ժամանակի մեծ մասը ծախտում են այս քանի վրա, թե ինչպես ապահովեն իրենց իշխանության վերաբերությունը, այսինքն՝ ինչպես մնան իշխանության դեկիմ՝ այս կամ այն չնաշագիտվ: Այն արհեստական ու բոլորի համար ակնհայր ազդեցությունների ներքո գրնավոր կուսակցությունները, որոնք սպեկուլացիան ընդունելու հայաշեմին, ինչպես նաև որոշ ավելի վաղ չնաշագրված կուսակցությունների

այս կամ այն քենորին հարելու հանգամանքը բույլ են պալիս ամբողջությամբ դրենել քաղաքական սպեկտրը և եզրակացություններ անել:

Հովհանք Խորշուոյան
«Ժառանգություն» կուսակցության մամլո խոսնակ
քաղաքագետ

Առաջիկա ընդունությունների նախաշեմին քաղաքական դաշտում գիրող վիճակը հենց պայքարն է ավելի շատ օլիգարքին խմբավորումների, ոչ թե քաղաքական ուժերի միջև։ Սուպեր անհանգույթացնող է այն, որ քաղաքական ուժերն ըստ էության անելիք չունեն։

Սպոնսա Սաֆարյան
ԱԺ 2007 պարզամափորության թեկնածու
«Ժառանգություն» կուսակցություն

Ուսակ ակտորներն այսօր փաստորեն երկու հոգի են՝ Ռոբերտ Ջոշարյանն ու Սերժ Սարգսյանը և ոչ թե մարդիկ, որոնք երևում են հեռուստացույցով ու որոշ քաղաքական քանի հետ ատու։ Նախկին ընդդիմությունը լրիվ ջարդվեց, նոր ժևավորված ընդդիմությունը դեռ հայրանի չէ հասարակությանը, որովհետիւ պարզ չէ՝ կատանա արդյոք ո՞ւալ ուժ, թե ոչ ուստի այլ ակտոր չի մնում։ Նոյն «Բմպիշմենպը», որին են մասնակցում են, այսօր կարող է հավաքել 2000 հոգի, բայց պարզ չէ՝ արդյոք մենք կրառանանք ուժ, որովհետով 2000 հոգին դեռևս ակտոր չէ։ Ակտորը նա է, ով ունակ սուբյեկտ է քաղաքականության մեջ, օրինակ՝ Տիգրան Թորոսյանը շար լավ մարդ է, բայց ունակ սուբյեկտ չէ։ Չնայած նա ԱԺ նախագահի իր սպասուով պիտի ակտոր լինի, բայց այդպիսին, որովհետով որևէ գործընթացի վրա չի ազդում, նա որոշում ընդունող չէ։ Այսօր որոշում ընդունում են նախագահը և Սերժ Սարգսյանը, և նույնիսկ Հանրապետականներն արդեն ակտոր չեն։ Մինչև վարչապետի (Անդրանիկ Սարգսյանի – հեղ.) մահը կարող էլեքտ ասել, որ «Հանրապետական» թեր ինչ–որ քանի վրա ազդում էր, բայց իիման դա էլ չկա։

Հրանտ Տեր–Արքահամյան
ԱԺ 2007 պարզամափորության թեկնածու
«Ինպիշմենը» դաշինք

Ընդդիմության՝ որպես քաղաքական համակարգում կարևոր դերակատարի նսեմացումն ընթանում էր ոչ միայն նրանց գործունեության հնարավորությունների սահմանափակման և ենուստաեթերի մուտքն անմատչելի պահելու ձանապարհներով, այլև ընդդիմադիր ուժերին կառավարելի դարձնելու կամ որպես կառավարվող մասուցելու եղանակներով, ինչն ընդդիմությանը ապահովում էր միայն գոյատևելու հնարավո-

րություն։ Այս պայմաններում այն ուժերը, որոնք ի սկզբանե իշխանակության նախագծով էին հանդիս եկել, բախվում էին ոչ միայն արտաքին խոշընդուների, այլև ներքին տրոհման և զաղափարական անկման վտանգներին։

1988–ին հնարավոր չէր պատկերացնել, որ մենք 1991–ին անկախանալով՝ 15 տարի անց կարող ենք այսպիսի զավշեցակի իրավիճակում հայրենիքնել։ ամբողջական ազդեցիկ կուսակցություններ, որոնք ներկայացնում են հասարակության մի զգակի սրբար հարված, ընդհանրապես հնարավորություն չունեն այս կամ այն կերպ երևալ երերում, կամ ունենալ իրենց ընկրողի հետ, ոչ թե անմիջական միտինգային, հանրահավաքային կամ դրաներու կապը, այլ հենց քաղաքակիրք այն կապը հեռուստավարեսության միջոցով, որ ընդունված է ցանկացած երկրում։

Հովհանք Խորշուոյան
«Ժառանգություն» կուսակցության մամլո խոսնակ
քաղաքագետ

Ընդդիմության մեջ նրանց, ովքեր կուսական ընդդիմություն լինելուց հոգնում են ու փորձում են սրբավորվել իշխանական գծագրի մեջ, ընդդիմադիր համարել չի կարելի։ Դրան զուգահեռ Հայաստանում արմադրական, զաղափարական ընդդիմությունը հնարավորություն չունի իր սրբավորվելու դրամական ժամանակակիրքը պարագած ողջ հնարապետությունով մեկ, որովհետով դրանք հակայական ծախսեր են, ո՞վ պիտի հոգա։ Եշխանությունը հասարակել է գուղակ վերահսկողություն ամբողջ երկրում։ Եթե որևէ գործարար հարում է ընդդիմությանը, նա պրոբեմ ունի՝ ընդդիմությունը բիզնես չպիտի ունենա։ Կամ այս իշխանությունից պիտի գողացած լինեն, այդ դեպքում վերահսկելի են, կամ նա, ով պիտի քեզ ֆինանսավորի, արդեն հարվածի դրականի։

Ոյն, որ Ռ. Ջոշարյանը Սուսկվայում, իրեն հարուկ ցինիզմով, ասաց, որ ընդդիմությունը փող չունի, դրա համար հեղափոխություն չի կարող անել բայց միևնույն ժամանակ նա զիրքի, որ ճիշդ է ասում, այսինքն՝ զաղափարդ գիել հասցնելը փող արժէ։ Սա է հարցը, իշխանությունն ընդդիմությանը բույլ է պալիս գործել ընդամենը ակումբի մակարդակով։ Դրանից ավելի բույլ չի պալիս, իսկ այդքանը իրեն չի խանգարում, որովհետով դրանով ինքը նաև կարդանում է վարկարեկել այդ զաղափարները՝ ասելով։ «Խոսում են, բայց ի՞նչ են կարողանում անել»։

Էղվարդ Անդրիանյան
Հայաստանի ազգայինական կուսակցություն
քաղաքական խորհրդի քարտուղար

Իրականում մեր ընդդիմությունը, ցավոք, ընդունել է գործող խաղի կանոնները, և եթե մենք լուրջ ընդդիմության մասին խոսներ, ապա այն պիտի փորձեն այլընտրանքային գաղափարներով կամ ծրագրային լուծումներով հանդի գալ, իսկ մեր ընդդիմության լոգունքը հետևյալն է. «Դուք այսքան վարեցիք, իիւս էլ մենք ենք ուզում վարել»: Եվ քանի որ ընդդիմության քիչունում տրնդեսական խումբ չկա, այդ ամենը դառնում է զույգ ցանկություն: Արդյունքում այսօր մեր ընդդիմությունը զույգ ֆոն է ապահովում՝ ոչ ֆորմալ ինսկիպութիւնական խաղի կանոններով:

Տիգրան Ջրաշյան

**AEPLAC հայաստանյան գրասենյակի ղեկավար
ղեկավարության ղեկավար**

Ընդդիմության պետք է լինի հանում ճիշդ լուծումներ գրանելու: Բայց ֆիլիպի գաղափարը մեզանում ոչ թե ֆիլիպ է, այլ «շլաքրատում» նման միքան: Դա այն պարզաբնիրից մեկն է, թե ինչու այդ ընդդիմությունը շանցավ նոր ԱԺ: ինչ բերում էին նախազահականից ու կառավարությունից, իրենք դեմ էին: Նույն ինմիտը կա իշխանության մեջ, ինչ բերում էին նախազահականից ու կառավարությունից՝ կողմ էին: Օրինակ՝ անդրամարանական միքան օգոստյան շերտի պահպանան համաձայնագրին նախորդ ԱԺ ընդդիմությունը դեմ բվեարկեց, չես հասկանում, թե ինչու ինչ է, չպաշտպանեն ոչ օգոստյան շերտը, որովհետ իշխանությունները մեր ուզութ չեն: Իրական կառուցղական ընդդիմություն երբեւ Հայաստանում չի էլ եղել: Մեզ մոտ բարիկադավորված է կա իշխանություն, որ հազնում է վարդագոյն ակնոցներ և ընդդիմություն՝ ու ակնոցներով:

Իմ ընկերներից մեկը մի լավ խուր ունի. «Մեր դժբախտությունը նրանում է, որ անարդարության դեմ պայքարում է անգրագիտությունը»: Այդպիս պայքարելով անարդարության դեմ՝ դու ոչ թե անարդարությունը պահանջնում ես, այլ ավելի ես հզորացնում:

Արմեն Ռուստամյան

**4-րդ գումարման ԱԺ պարզամագոր
«Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցություն**

Քաղաքական գործնքացներից ընդդիմության արտամդումը բխում էր իշխանության ինքնապահպանման և ինքնավերաբարտադրման ռազմավարությունից: Իսկ իշխանական կլանի վերաբարդման անզիջում կեցվածքը պայմանավորված էր տնտեսական բարիքների՝ անվտանգ և շարունակական տնօրինման ձգտումով:

Հայաստանը գրանցում է անցումային փուլում, եթե գրանցության պիտական չկաց անցում է կարգարվում մասնավորի, և հանրապետության ունեցվածքը պետք է մասնավորեցվի: Դեռ բավականին ունեցվածքը կա, որ կարող է մասնավորեցվի, և այս ընթացքում իշխանություններն ունեն անհայտեակ հնարավորություն՝ ոչինչ չանելով մեծ գումարներ աշխատել: Իրենք հենց այնպիս այդ իրավունքը չեն զիջի: Բացի այդ իշխանությունները լավ են հասկանում, որ ոչ միայն իրենց բիզնեսը, այլ իրենց ֆիզիկական զոյլությունները կվարենգվի, եթե, ասկզած մի արացեն, իշխանության անցնի ընդդիմությունը:

**Արծրուա Պետական
քաղաքական մեկնարան**

Ասում են՝ Հայաստանում մոնոպոլիաներ կան. դա օբյեկտիվ է, առյանը դեղի է ունեցել ԱՄՆ-ում 100 տարի առաջ: Այնպիս գրեթե նոյնն էր. Ոռովկելերների ծնորում էր ողջ բանկային համակարգը: Կամ ատում են, թե Հայաստանում օլիգոպոլիսները մկան իշխանության մեջ, բայց նոյն Ոռովկելերները դարձան նահանգապետներ, նոյնիս պահ եղավ՝ ուզում էին դառնալ նախազահական թեկնածու: Այսինքն՝ այդ փուլերը դասական ժողովրդավար երկրները անցնել են. դա բնական փուլ է, որը կանցնի:

Էղուարդ Շարմազանով
Հայաստանի հանրապետական կուսակցության մամլո խոսնակ

Հայաստանյան քաղաքական դաշտի բարձր վերահսկողության համատեքստում, այնուամենայնիվ, մինչընտրական շրջանում դիտարկվում էր կուսակցական պլյուրալիզացիա: Նորանոր քաղաքական ուժերի ձևավորումը, սակայն, մեծամասամբ արհեստածին էր և կրկին արտահայտում էր իշխանական դերակատարների կամքը: Պլյուրալիզացիան տեղի էր ունենում քաղաքականության համբնդանուր ապագաղափարականացման մթնոլորտում: Այսպիսվ, զաղափարական վակուումը մինչընտրական Հայաստանի քաղաքական իրողության ևս մեկ քաղադիք էր:

Հիմա հայկական քաղաքական միտքը ներկայացնում է «լավոններ»: Ո՞րմ է նրանց մակարդակը, նրանց փիլիսոփայությունը, նրանց քաղաքական հայացքները: Ի՞նչ զաղափարախոսություն կարող են ունենալ նրանք՝ ոչ մի:

ՀՀ քաղաքացի, ք. Երևան

Դեռևս մինչև Ազգային ժողովի ընդունությունը երկրում սպեհօված գողակալիքար մրածողության մրնողորդը հանգեցրեց նրան, որ այսօր քաղաքական պրոցեսները չեն գնում, և չկա կարծիքների բախում: Մենք չենք գտնում, որ հարբակում աշխարհաքաղաքական կամ զաղափարական կողմանությունների բախման մեջ կարծիք չնավորվի, որ հասարակությունը ճայն դալով իմանա, թե ում է ճայն դալիս: Իշխանության մեջ էլ կան ազարական արժեքներ կրողներ, որոնք աշխարհում են այս վարչակիմինալ համակարգում, ընդդիմության մեջ ևս կան ազարական արժեքներ ունեցողներ, ովքեր առնվազն հանդուժող չեն մեկ ուրիշի կարծիքին:

Արդեն հանգել ենք նրան, որ այսօր չենք գտնում զաղափարական բախում. դա սարսափելի է:

Եղանակ Անդամյան
Հայաստանի ազարական առաջադիմական կուսակցություն
քաղաքական խորհրդի քարտուղար

Մեր քաղաքական վերմահավը բավականին տիտուր վիճակում է, որովհեկան չկա զաղափարների պայքար, չկա քաղաքական պայքար: Եթե հիշենք, թե ինչ կար 1993–1995 թթ., երբ կար գուսակելիքների պայքար, երբ կար Ղարաբաղյան խնդրի հետ կապված մեծ բանավեճ՝ նույնիսկ սկսած 1995–ից, երբ քննարկում էր, թե ինչ մոդելով պետք էր Ղարաբաղ զնալ–զալ, և եթե համեմատենք դա այսօրվա քաղաքական իրավիճակի հետ, ապա այսօր ոչ մի քաղաքական բանավեճ չկա: Կա զուր անձնական մակարդակի կամ իմիդրացիոն քաղաքական պայքար: Հայաստանում լուրջ մրածող քաղաքական վերմահավ գոյություն չունի, որի արդյունքում են չեն գտնում դարձերություն «Ա» և «Բ» քաղաքական ուժերի միջև:

Երանել Քողոյան
քաղաքագել

Այօրվա քաղաքական դաշտի շատ կարևոր բնութագիր է, որ պայքարը ապարագականացվել է, և դա շատ մեծ վիրանգ է, որովհեկի, եթե չկա իրական քաղաքական ծրագրերի մրցակցությունը և կան լրիվ այլ՝ կլանային խաղի կանոններ, արդարին մրցակցության մեջ երկիրը դրուժում է, որովհեկի ներքին քաղաքական պայքարից պիտի չնավորվեին նոր զաղափարներ, ծրագրեր, որոնք չեն չնավորվում:

Գաղափարների մասին խոսք լինել չի կարող, եթե դարձական օրենքը չի գործում: Գաղափարական պայքար կարող է լինել երբ ապահովված է որոշակի կանոններով սիստեմ: Եթե խաղի կանոնները չեն գործում, ֆուր-

թու չեն կարող խաղալ: Առաջին հերթին պետք է կանոնների հարցը լուծել հասարակությունը պետք է մորթիկացվի այս խնդրի շուրջ:

Հրանության Տեսք–Արժականյան
ԱԺ 2007 պարզամավրության թեկնածու
«Իմպիչմենտ» դաշնար

Այսպիսով, քաղաքական դաշտի ուրվագիծը Հայաստանում մինչև 2007 թվականի ԱԺ ընտրությունները մեկ նախադասությամբ ամփոփվում էր հետևյալում. այն բնորոշվում էր որպես ապարագական, ապագաղափարական համակարգ, որտեղ գործում էին խաղի ոչ ֆորմալ կանոնները, և տիրապետում էր իշխանական ներակատարների կամքը, որտեղ քաղաքական գործընթացները, այդ թվում ընտրությունները, ինչպես նաև կուսակցությունների բազմազանությունն ու բազմակարծությունը հիմնականում վերահսկելի և կառավարվող էին:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍՏՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԾՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Քաղաքական ցանկացած գործընթաց տեղի է ունենում սոցիալական համատեքստում, և դրա որակական բնութագիրը պայմանավորված է տվյալ հասարակության մշակութային գործոններով ու քաղաքացիական էթիկայի հաստության մակարդակով:

Հայաստանում Ազգային ժողովի ընտրությունները 2007-ին դեռևս չունեին հասարակական այն կարևորությունը, ինչպիսին սովորաբար ունենում են նախազահական ընտրությունները, երբ խնդիրն ազգային մեկ լիներ ընտրելն է, և յուրաքանչյուր քաղաքացու ներսում գրնե կա ներքին տրամադրվածություն, հուզմունք, վրոշմունք կամ անհանգստություն:

Հաղաքական համակարգը ծնավորված չէ, մարդու չի գիրակցում, որ ԱԺ ընդունուելու կարգարում է իր 4-5 տարվա ընդունուելը, մասնաւում է սա իմ բարեկամն է, նա իմ հորեղբորդին է, մյուսը շատ լավ տղա է, ու այդպիսի է ընդունում: Հայաստանում դեռևս միայն նախազահական ընդունուելիքն է, որ մարդիկ հարակ տարբերում են իշխանությունն ու ընդդմուրյունը: Մեզ մոտ մարդիկ ընդունում են ոչ թե կուսակցությունը, ծրագրերը, այլ ավելի շատ՝ անձերի:

**Եղուարդ Շարժագույնվ
Հայաստանի հանրապետական կուսակցության նամակ խոսնակ**

Խորհրդարանական ընդունուելիք պարագայում իրավիճակն իհարկ է մի փոքր այլ է, որովհետո դրանք հասարակության կողմից այդքան շատ չեն կարևորվել և ընդդմուրյունը, թեանու էլի կարողացել է հասարակության մեծ ակտիվությունն ապահովել և հանրային մեծ աջակցություն արանայի, բայց դա համեմատելի չէ նախազահական ընդունուելիքն անհաշեմին սովորաբար սպեհովով իրավիճակի հետ:

Սպյուսա Սաֆարյան
ԱԺ 2007 պարզամավորության թեկնածու
«Ժառանգույն» կուսակցություն

Հասարակական ընկալումներում Ազգային ժողովի՝ իբրև իշխանության օրենսդիր ձյուղի մասին թույլ պատկերացումները արդեն իսկ կանխորշում են ուշադրության որոշակի պակաս խորհրդարանական ընտրությունների նկատմամբ: Սակայն ընդհանուր վերաբերմունքի ձևավորման վրա էականորեն ազդում են նաև առհասարակ ընտրությունների հանդեպ դիրքորոշումները, տարածված քաղաքական ու քաղաքացիական գաղափարները, արժեքները, ընդունելի կանոնները, արդեն տեղի ունեցած քաղաքական նախադեպները և այլն: 1990-ականների սկզբին համահարակական շարժման բարձր ալիքի վրա ձևավորված անկախ Հայաստանի պետական քաղաքական համակարգի կառուցումը հետագայում գնաց քաղաքացիական արձագանքների և ըմբռատությունների ձնշման ձանապարհով: Առաջին իշխանությունը ժամանակի ընթացքում հետացավ հասարակությունից և ընդդմանցավ նրա կամքին ու ազատությանը: Հետագա զարգացումները, որ միևնույն սցենարի ավելի ու ավելի դրամատիկ դրսություններն են, ամրապնդեցին ավանդույթը. քաղաքացիական արձագանքը և մասնակցությունը երկրի քաղաքական կյանքում ձեռք բերեցին գրոյական նշանակություն:

Հասարակությունը նաև օրգանիզմ է, որը հոգնում է անարդյունավելիք պայքարից՝ պատրիս զլիուզ պալուց: Իսկ դուք իշխու՞մ եք, որ պարբերաբար հասարակության ողնաշարը կուրրվել է իշխանությունների կողմից, կուրրվել շատ բիոր չնույ: Դա եղել է նաև 1996-ին, երբ հասարակությունը սպացավ առաջին հումկու հարվածը: Այդ պահից դրվեց ավանդույթը, որը հերք խորացավ: Եթե այն ժամանակ դա չընկանած, զարուրելի արարք էր, ապա այն, ինչ կարարվում է հիմա, դրա լրանապարհին է, նրանք, այսպիս ասած, ծաղիկներն ինչ ամենի համեմատ, ինչ իինա է լրեղի ունենում: Նկարի ունեմ թե՝ 1998-ի, և թե՝ հայրեական 2003-ի նախազահական ընդունուելիքը նաև 2003-ի խորհրդարանականը և 2004-ի ապրիլի 12-ի ժեժու ջարդը: Հասարակությունը ուզրի էր կանգնել որպեսզի պեր կանգնի իր ժայմին: Եվ պեսանք, թե ինչ եղավ. կուրրեցին հասարակության ողնաշարը, հասկացրին, որ «մեր դեմ իսաղ չկա»—ի տարբերակը գործում է՝ վերափոխված «մեզանից բացի ուրիշ տղամարդ չկա»⁴ տարբերակով. իրենք կարող են ամեն ինչ անել մընել-շարդուփշուր անել գրասենյակները, ժեժու մարդ-

⁴ «Մեր դեմ իսաղ չկա» արտահայտությունը վերագրվում է 1992-1996 թթ. ՀՀ Ներքին գործերի նախարար Վ. Սիրահետյանին, իսկ մեզմից բացի «ուրիշ տղամարդ չկա» արտահայտությունը՝ ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանին:

կամ, ապօրինի ծերբակալել և այլն: Իսկ Սահմանադրության փոփոխությունների հասարակության ոգին կողքելու գագաթնակերծ էր: Հասարակությանը հասկացրեցին, որ դուք բնդիանապես պետք չեն, քո չայնը ոչ մի դեր չի խաղում, դու կարող ես ընդհանրապես չգալ բնդրակեղամաս և չընդդուք մենք կընդդուք և կգրենք, որ դու եկել ու մասնակցել ես:

Հովանի Խորշուոյան

«Ժառանգություն» կուսակցության մամլո խոսնակ քաղաքագել

«...Ես ի նկատի չունեմ պատգամավորներին, ես ի նկատի ունեմ նորմալ մարդկանց», – հեռուստատեսային հաղորդումներից մեկի ժամանակ կատակեց ՀՀ Յ-րդ գումարման Ազգային ժողովի դաշնակցական պատգամավոր Վահան Հովհաննիայանը: Նրա կողմից «պատգամավորի» ու «նորմալ մարդու» կես-կատակ տարանջատումը հասարակության մեջ իսկապես առկա քաղաքական բներացման և իշխանություն-հասարակություն օտարված հարաբերությունների վառ արտահայտությունն էր:

Հայմ զանգվածներում դիրում է հիսարափություն, քաղաքական պրոցեսներից օքարվածություն և թերահավաքություն, որ իրավիճակը կշրկվի: Սա երեք գնահատականներ են, որ կարելի է լրաց:

Մովսես Սաֆարյան

ԱԺ 2007 պարզամավորության թեկնածու
«Ժառանգություն» կուսակցություն

Այն դեպքում, երբ հասարակության մեծամասնությունը իր կենսական բարօրությունը կապում էր քաղաքական գործընթացների հետ, և հետաքրքիածությունը քաղաքականությունից չէր նվազում, հանրության մասնակցությունը քաղաքականությանը, միևնույն է, խոհանոցային և քաղաքային բննարկումներից այն կողմ չէր անցնում:

Ամրող հանրապետությունը քաղաքականացված է, բոլորը քաղաքական մեկնարաններ են դարձել, այդքան պարապ ժողովուրդ պատերի դաշտ հինգ հինգ զրադմունք պիտի ունենաւ. մեկը հինգ է քննադատում, մյուսը՝ նոր:

ՀՀ քաղաքացի, Շիրակի մարզ

Անուամնեայնիվ, Հայաստանի էլեկտրության 70–80%-ը բողոքական էլեկտրության է, որը դժողուն է էրկրում սրեղծված իրավիճակից և զգում է փոփոխությունների կարիք:

Մովսես Սաֆարյան

ԱԺ 2007 պարզամավորության թեկնածու
«Ժառանգություն» կուսակցություն

Հասարակությունը, որն ըստ էության պետք է լիներ քաղաքականության հենքը, դերակատարից վերածվել էր հանդիսատեսի ու ինքն իրեն ընկալում էր քաղաքական կյանքից հեռացված, և անզորության զգացումը դարձել էր տիրապետող: «Իսկ ինչ կարող եմ ես անել մենակ» հարցադրմանը մեծամասամբ հետևում էր տարածված պատասխանը՝ «ոչինչ»: Սեփական քաղաքական դիրքորոշումներով ու վարքագծերով դրսնորվող դերակատարությունը չափազանց թույլ էր գիտակցվում հանրության կողմից:

Խորհրդային միությունում ոչ թե հոսանքություն ու հիսարափություն էր, այլ վախ էր ընդամենը: Մարդկանց մոդ հեմաքրքրություն կար, դեռ հույսը կար, որ կարելի է «Ազգություն» ուսիղույան լսել «Ամերիկայի ծայլ» լսել և ճշմարդկությունն իմանալ: Այսօր Հայաստանում այլ է: Մարդիկ զիրեն, որ ինչ էլ ուզեն, կարող են խոսել իշխանությունների մասին, կարող են լսել «Ազգություն» էլ, «Ամերիկայի ծայլ» էլ, ինքորինացիա սկանալ: Բոլորն էլ զիրեն ինչ է կարարվում, ոչինչ ոչ ոքի համար զաղանիք չէ, բայց բոլորն էլ զիրեն, որ իրենց իմանալը, իրենց մի բան անելը ոչինչ չի փոխի: Եվ դրանից առաջանում է այս անզորության զգացումը:

Հովանի Խորշուոյան

«Ժառանգություն» կուսակցության մամլո խոսնակ քաղաքագել

Տարիների կնիքն ունեցող անզորության զգացումը հեղինակագրկել էր ընսրությունների ինստիտուտը հասարակության աշխում, անվստահություն սերմանել դրա նկատմամբ և հանգեցրել հասարակության լայն շերտերի ընտրական պասիվությանը ու քաղաքացիական անգործությանը:

Եթե ժողովրդավարություն լինի, եթե ես իրոք զգամ, որ իմ ծայլի կարևորությունը կա, ես կմասնակցեմ ընդդույններին:

ՀՀ քաղաքացի, ք. Երևանի քաղաքի

Ես մշտապես շատր ակդիվ մասնակցել եմ ընդուրություններին՝ որպես քաղաքացի, և ակդիվորեն հորդորել եմ բոլորին, որ իրենք էլ մասնակցեն. կապ չունի, թե ում կը վերաբերեն, որովհետո ընդուրությունն այն ինստիտուտը է, որի միջոցով մարդն իր դերակարգարումն է ունենում երկրի կառուցման հարցում: Բայց ինձ համար այս ընդուրություններին այն ընդուրություններին են, որ առաջին անգամ կասկած են հարցում, քանի որ այժմ հիմնական դերակարգությունները նման դեսական չեն առաջացնում:

Երևանի Քողոյան քաղաքագետ

Մարդիկ ընդուրություններին վերաբերում են որպես այնպիսի մի քանի, որն անցնում է իրենց գիրակցության կողքով:

Ալեքսանդր Խականդարյան «Կովկասյան լրատվամիջոցների ինստիտուտի» գնորդն քաղաքագետ

Հիմա հասարակությունը մեզ մոտ բավականին դեգրադացված է, որովհենու քաղաքական պրոցես չկա, և դա ազդում է հասարակության վրա: Եթե համեմատինք 90-ականների կամ 2000-ականների սկզբի հետ, շատ ավելի վար նյութական պայմաններում ապրող հասարակությունը քաղաքացիական առումով շատ ավելի ակդիվ էր: 1997-ին մենք մեր կուրսում ակդիվ ըննարկում էինք ընդուրությունները, իսկ հիմա են դա չեմ նկարում: Ժողովուրդը ապաթիայի մեջ է: Իմ կարծիքով այս ընդուրություններին իրականում շատ քիչ մարդ կմասնակցի՝ մոլուխորապես մի քիչ քանի հանրարկին: Այնպես 10% մասնակցություն էր, այս ընդուրություններին էլ՝ մոտ 15% կլին: Այդ ապաթիան շատ վտանգավոր է: Եթե խորհրդարանական ընդուրություններին հասարակության մեծամասնությունը չի մասնակցում, նշանակում է, որ հասարակությունը քաղաքականապես առողջ չէ:

Հրանտ Տեր-Աբրահամյան ԱԺ 2007 պարզամափորության թեկնածու «Ինպիչմենտ» դաշինք

Իսիջիայլոց, մենք այս առումով խորհրդային համակարգն ենք վերականում, մի քանի դարի հետո ոչ ոք ընդուրության չի գնա, կլինի մի քենածու ու 90%-ով կը նպաստի. ասդիմանար գնում ենք դրան:

Արծուան Պետրոսյան քաղաքական մեկնարան

Ընտրությունների ինստիտուտի նկատմամբ հասարակության վստահության անկումը պայմանավորված էր նաև եվրոպական կառույցների հանդեպ հավատի կորստով, երբ 2005 թ. Սահմանադրության փոփոխությունների հանրավեն դիտորդական առաքելությունները համարեցին կայացած, մինչդեռ ընտրողների խիստ պասիվ մասնակցության պայմաններում արդյունքներն արդեն իսկ վստահություն չեն ներշնչում:

Ու եվրոպական դիտորդներն էլ իմ հայ-հայ եկամարհմային պայմանավորվածությունների արդյունքում կզան և կասեն. «Այո՛, հասարակությունն դու եկել և մասնակցել ես, ուղղակի եղել են որոշ խախտումներ»: Մենք միշտ եվրոպական կառույցների ներկայացուցիչների հետը հանդիպումների ժամանակ ասում ենք, որ իրենք մենակցից են Հայաստանում զիրող այսօրվա վիճակին, որովհետո իբրև բարեփոխված սահմանադրությունը ընդունելու համար նման խայլառակ կեղծիքների վրա աչք փակելն ուղղակի ժողովրդավարության և եվրոպական արժեքների վարկարեկման կարևորագույն փուլն էր Հայաստանում: Մեկ-երկու դարի առաջ ոչ ոք չէր կարող ասել. «Եվրոպան այսպիս, այնպիս, մեզ պետք չի»: Չին ասում, որովհենու հիշում էին, որ 2003-ին կեղծիքներին գոնե բավականին կոչու պակասիան հմայեց և ԱՍՆ-ից, և եվրոպական կառույցներից, և մարդիկ դեռ հոյս էին կապում, որ այդպեսից կարող է զալ արդարությունը: Հիմա դեսան, որ՝ ոչ այնպիսի է կարելի է առնել կաշառել պայմանավորվել: Մարդկանց պատկերացմանը, եթե այս իշխանությունները նորից մարտեցին իրենց արածները, որինման ամեն ինչ կարող են անել, որինման վիճակն իսկապես ամենույն է:

Հովհանն Խուրշույշյան «Ժառանգություն» կուսակցության մամուն խունակ քաղաքագետ

Պետական գործընթացներում սեփական դերակատարությունը չտեսնող հանրության շրջանում քաղաքական կանոնների և առհասարակ քաղաքական միջավայրի ձևավորման հետինակ էին դիտարկվում միայն քաղաքական, հատկապես՝ իշխանական գործիչներն ու ուժերը:

Բոլորս մկրածում ենք, քեզ մեզանից ոչինչ կախված չէ. զնամ ընդուրության, քեզ չգնամ, միևնույն է ինչ լինելու է, կլին: Մենք փոքր մարդիկ ենք: Իրենք ինչ որոշեն, այնպես էլ կլին: Իշխանությունն ուժեղ է, կոռումպացված է,

կրիմինալ է, մենք ոչինչ չենք կարող անել: Այս մթնոլորդն է իշխում, և սա լավ չէ:

ՀՀ քաղաքացիք ք. Երևան

Հայերն ընդհանրապես մտքի նկարմամբ թերահավաք են, հայերը ոչինչի ժնի հավագում՝ նույնականացնելու համար: Հայերը հավագում են միայն փողի ուժին: Բայց դա գեներիկ չի, պարզապես իրավիճակն է այդպիսին:

Արմեն Քաղաքաարյան
«168 ժամ» թերթի փոխհմագիր
քաղաքական մեկնաբան

Հասարակության պասիվ, ապաթիկ դիրքորոշումը ԱԺ ընտրությունների նախօրեին պայմանավորված էր նաև ընտրական գործընթացը որպես ձևական միջոցառում ընկալելու հանգամանքով, մանավանդ երբ հանրությանը մատուցվում էր, թե պետք է ընտրություն կատարի գիտական փորապես իշխանական ուժերի միջև:

Միշտ կարենոր ինդիր իշխանական համակարգը լուծել է. նա կարողացել է համոզել հասարակությանը, որ «խաղ չկա», և որ այս ընկրությունները զույգ ֆորմալ երևույթ են, այսինքն՝ «ինչ էլ անեք, միևնույն է, հաղթելու են այն ուժերը, որոնք պիտի հաղթեն»:

Բորիս Նավասարդյան
«Երևանի մամուլի ակումբ» նախագահ

Իշխանությունները բացարձակապես շահագրգուված չեն, որպեսզի հասարակությունն արքնանա: Նրանք շահագրգուված են, որ մասնակցությունը լինի նվազագույն: Նրանք, ում իրենք կաշառել կամ վախեցրել են, որ զնան ընդունեն, միևնույն է, զնալու են և կընդունեն իրենց օգտին: Իսկ նրանք, ում իրենց չենքիրը չեն հասել, իշխանությունները շահագրգուված են, որ այդ մարդիկ մնան պասիվ, մնան գրներում, որովհենիք նրանք պուրենացիալ իշխանավորություն իրականացնելող զանգվածն են:

Հովհանն Խուրշուդյան
«Ժառանգություն» կուսակցության մամուլ խոսնակ
քաղաքագիր

Արդյունքում սեփական երկրում օտարված հասարակությունը իր քաղաքական վարքագծում սկսեց դրսնորել «կեղծ չեզոք» կամ «կեղծ հա-

մակրող» կեցվածքը, որը սովորաբար բնորոշ է փակ հասարակություններում փոքրամասնություն կազմող հանրույթներին, օրինակ՝ գաղթականներին: Մարդիկ, գիտակցելով սեփական ազնեցության բացակայությունը, նախընտրում էին զերծ մնալ կոնկրետ քաղաքական ուժի նկատմամբ դիրքորոշում արտահայտելուց՝ խուսափելով հնարավոր բացասական հետևանքներից:

Ինձ համար բոլորը մեկ են, բոլորն եւ՝ լավը, ով ուզում է, բող լինի, միայն թողովրդի մասին մտածեն, ժողովրդին լավ աչքով նայեն:

ՀՀ քաղաքացիք ք. Երևան

Ես զարմանալի բան պարզեցի: Մարզերում քաղաքական գործիչների հենք հանդիպումների ժամանակ նույն մարդիկ և Սերժ Սարգսյանի բոլցն էին համբուրում, առա հենք ողջագուրվում, և հենք գնում ընդդիմադիրների մոտ, ասում էին. «Այո՛, միայն իշխանավորություն»: Այսինքն՝ մեր «քարի, անկեղծ ու միամիտ» ժողովուրդը քավականին էլ խորամանէ: Բողորին ցոյց են կալիս, թե «քո կողմից ենք», որ լրենեն՝ որ մեկից է հնարավոր ինչ՝ որ բան սպասան: Ես սա Արքիկում տեսա: Արքիկ ասում էին, որ ոչ մեկին էլ չեն հավագում, բոլորն էլ նոյն բաներն են ասում, նոյն խոսքումներն են կալիս, և իրենք կիսական որևէ մեկին, երբ կրեսնեն իրական արված գործը՝ լինի ընդդիմադիր, թե իշխանամենք: Ոչ մեկին էլ չեն հավագում, բայց բոլորին էլ արդարուայր համակրանք են ցոյց տալիս: Այլապես անհասկանալի է, թե ինչպես է նոյն կինը ժողովրդական կուսակցության հավաքին գոռում. «Մարդ մը մեծապատճեն, միակ զիրակ մարդը», – իսկ հետո նոյն ողջորությամբ մեկ ուրիշ հանրահավաքին է գոռում: Ինըր դա բացարձում է այսպես. «Մեր պարտքն է բոլորին մեծ սրբով դիմավորելը, հետո լրենենք, թե ումից՝ ինչ»: Սա հասպակության մի մասն է՝ խորամանկ մասը, որ բոլորին ժպղում է՝ ինչ՝ ինչ ակնկալիքով: Մյուս մասն էլ ընդհանրապես անդարբեր է, հուսահապ, միզուց չգնան էլ ընկրության: Հիմա դժվար է ասել՝ պասիվ հուսահավաքներն են շատ, թե այդ ժպղուց ակնկալիք հուսահակությունը:

Աննա Բարայելյան
«Առավոր» օրաթերթ
լրագրող

Հայաստանի քաղաքացիների արտամեջվածությունը քաղաքական գործընթացներից բացասարար էր անդրադառնում նրանց և սոցիալա-

կան պաշտպանվածության, և պաշտպանվածության զգացողության վրա:

Իշխանությունները նաև սպասուցել են, որ եթե անգամ երկրում լրացրեական աճ արձանագրվի, դա բոլորի համար չէ, այսինքն՝ ազգային հարստությունը բաշխվում է անհավասար կերպով: Եթե ժողովրդին հարցներ, նրանք էլ կասեն, որ երկրում օրենքը չի աշխարհում, համարած բայան է զնում, երկրում աղքաղությունը չի վերացվում:

Սպյուս Սաֆարյան
ԱԺ 2007 պարզամափորության թեկնածու
«Ժառանգություն» կուսակցություն

Իմ խորին համոզմամբ, ամենամեծ թերությունը ոչ թե սոցիալական անհավարությունն է, այլ սոցիալական անարադարությունը: Եթե իր սահմանադրական իրավունքներից Պողոսը չի կարող օգտվել, իսկ Պետրոսը կարող է ամեն ինչ, եթե օրենքը բոլորի համար օրենքը չէ, եթե օրենքը կողմում է միայն չունենող վրա, իսկ ունենո՞ւ ինչ ուզում՝ անում է, դա է պրոբլեմը:

ՀՀ քաղաքացի, ք. Ալավերդի

Քաղաքացիների սոցիալական անպաշտպանությունը, որը լայն իմաստով ընդգրկում է տնտեսական, իրավական և քաղաքական բաղադրիչները, հանգեցրել էին պետական ինստիտուտների նկատմամբ անվատահության ու բացասական դիրքորոշման: Հայաստանի հասրակությունը ոչ թե իրեն էր նոյնացնում երկրի ու պետության հետ, այլ միայն իշխանություններին: «Պետություն» ասելով առավել հաճախ հանրությունը հասկանում էր իշխանական կլան, կառավարություն, նախագահի անձ, ևս մի քանի կարևոր քաղաքական դերակատարներ՝ իրենց առաջնային սոցիալական շրջապատի հետ միասին, որոնք ոչ մի առնչություն չունեին հանրային կյանքի, հասարակական ինդիրների և սոցիալական պաշտպանության հարցերի հետ: Արդյունքում ավելի ու ավելի էր խորանում հասարակության և պետական–քաղաքական ինստիտուտների միջև անջրաբետք: Դրա մի կողմում «իշխանավորն» էր, ով դիտվում էր որպես բոլոր արգասափոր ռեսուրսների լիիշխան տեր, ում պատկանում է որոշումների կայացման և բարեկեցիկ ապրելու մենաշնորհը, իսկ մյուս կողմում՝ ձնշված և օտարված ինքնարներում ունեցող քաղաքացին:

Մեր մարզում լինդիանրապես մարզպետը նշանակվում է իր համար, քաղաքապետն ընդունվում է իր համար, պարզամափորն էլ՝ իր:

ՀՀ քաղաքացի, Սյունիքի մարզ

Քաղաքը բաժանված է մի քանի մասի՝ երեք մարդու միջև: Մենք այդ երեք մարդու ձորակն ենք:

ՀՀ քաղաքացի, ք. Վանաձոր

Այսօր մուրացկան են դարձրել ժողովրդին, հեղինակագրել ծնողին երեխայի մոտ, սպորացրել են մարդուն: Գիրք՝ մարդու համար ամենաքանչ բանը նրա արժանապարզությունն է, որի վրայով գնում են, զալիս: Չեզ ո՞վ է բոյլ վպիկ: Սա մի անգամ տրված կյանք է, որը մարդը պարտավոր է ապրել արժանապարզությամբ: Իսկ իրենք դա էլ կերան, կուլ վրեցին... Ինը բոյլ աշխաղի, բողնի ես էլ աշխաղեմ: Ես իմ դամակը կապրեմ, ինչ պեսը չի, որ ինքը սարքի:

ՀՀ քաղաքացի, ք. Երևան

Քաղաքական, հատկապես իրավական և տնտեսական պաշտպանության խնդիրները հանրության համար մնում էին բաց, մարտահրավերները ենթակա էին ինքնուրույն դիմակայման:

Մեր հանրապետությունում մարդու իրավունքները չեն պաշտպանվում: Որ պաշտպանվեին, այս օրը չէինք ընկնի: Ոչ էլ խոսքի ազակության մասին կարող ենք խոսել: Հենց բերանդ բացում ես, դրախու են զլիսիդ լրեցնում են: Մեր ցոյցերի ժամանակ լավ երևաց, թե ինչքան ազակություն ունինք:

ՀՀ քաղաքացի, Արմավիրի մարզ

Աղյակես հանրությունն իր անելիքը տեսնում էր առօրյա հոգսերի լուծումները որոնելու մեջ: «Ամեն մեկն իր զիկի ձարը տեսնելու» սկզբունքով առաջնորդվելով՝ հասարակությունը փաստորեն ընդունել էր քաղաքական միջավայրի առաջարկած վայրի խաղի կանոնները, որով և ավելի էին խորանում կյանային կապերը, կոռուպցիոն և անօրինական հարաբերությունները: Ընդ որում, կյանային միավորումները ձևավորվում էին ոչ միայն ազգակցական կապեր ոնեցողների միջև, այլև սոցիալական, տնտեսական ռեսուրսներին ձգողողների և դրանք բաշխողների միջև: Այս մեխանիզմով իշխանական կյանային բոլոր սնվում էր հասարակության կյանային օդակներով:

Մենք ունենք մի քանի բուրգ, որոնք իշխում են մինչև ժողովուրդ՝ բարեկամներ, ընկերներ, ծանոքներ, շահեր, այս կամ այն «լրանիքներ»։ Հասարակությունը դարձել է բուրգերի մաս, հասարակության բաժանումը բուրգերի միջև է։ Կամ մի քանի մեծ և մի քանի փոքր բուրգեր։ Պայքարն ընթանում է այս 15–20 բուրգերի միջև, իսկ մնացածը, ով ոչ մի տեղ չէ, փորձում է իր դեղը գրնել։

Տիգրան Զրբաշյան

AEPLAC հայասպանյան գրասենյակի ղեկավար
դնարկագետ

Նախընտրական գործընթացում այս բրգածել համակարգն աշխատում էր որպես ընտրակազորի բաշխման և առհասարակ ընտրախախտումների իրագործման արդյունավետ ցանց։ Արժեգրկված, գաղափարազուրկ և ապաբաղաբական ընտրական գործընթացը վեր էր ածվում քաղաքացու և իշխանության միջև գործարքի։ Այսպես, Ազգային ժողովի մայիսյան ընտրությունները շատերի համար «գոնե օգուտ քաղելու» իրավիճակային հնարավորություն դարձան։

Քանի որ քաղաքական համակարգի մարդիկ լրաբեներ շարունակ չեն կարողանում հասարակության խնդիրներն արդյունավետ լուծել ընկրությունների շրջանը ընդունակվածի համար դառնում է սեփական խնդիրները լուծելու հարմար պահ։ Այս պահանջարկից նախընդրական շրջանում օգկվում են օլիգարքիկ ուժերը, որոնք ունեն փող ունանք՝ վարչական լծակներ։ Մի ցուցանիշ, այս նախընդրական շրջանում շատ է մեծացել նախարարությունների, հարկապես՝ սոցիալական ոլորտը պասարկողների (Սոցապահովության, Առողջապահության և այլն) ծանրաբեռնվածությունը դիմումների առումով։ Սա ցոյց է դրան, որ մարդիկ այս շրջանն իսկապես դիմուրկում են որպես խնդիրների լուծման պահ։

Սպյուսա Սաֆարյան

ԱԺ 2007 պարզամավորության թեկնածու
«Ժառանգություն» կուսակցություն

Հասարակությունն էլ է ընդունել խանդի այդ կանոնները։ Նա ընկրություններին փորձում է վաճառել իր ծայթը, որովհենիվ շատ լավ հասկանում է, որ պայքարն ընթանում է ոչ թե քաղաքական ուժերի, այլ խմբավորումների միջև։ Նրանց միջև «զուանների» կամ ոլորգների բաժանման պրոցես է զնում։ Եվ բնական է, որ հասարակությունը փորձում է օգտվել։ Եթե այսօր

մարդկանց հարցնենք, թե ինչի համար են չայնի գործիք այս կամ այն ուժին, ապա ոչ ոք չի ասի, թե այդ ուժն առաջարկում է ծրագրային դրույթներ, որոնք մուտքային իրեն։ Մենք գաղափարական քվեարկություն չունենք, որովհենիվ ժողովուրդին գաղափարական չեն առաջարկում։

Տիգրան Զրբաշյան

AEPLAC հայասպանյան գրասենյակի ղեկավար
դնարկագետ

Ի՞նչ վայր բան կա նրանում, որ թեկուց կարգութիւն են բաժանում մարդկանց։ Կամ մարդիկ, որոնք դրա կարիքն ունեն։ Նախ մարդկանց մեղադրել պետք չէ, նրանք փակուղային վիճակում են։ Օրինակ, իմ զարմուհին ոքք է, ընդունվել է բուհ վճարովի համակարգով, առանց որևէ հույս ու հավաքի դիմել է «Բարգավաճ Հայասպանին», որ իրեն փոխհարուցեն։ Եվ արել էն։ Ոչ ոքի այդ կուսակցությունից չի ճանաչում։ Գուցե հենց 18 լրաբենան դաշնան, ընդունվի այդ կուսակցություն։ Թող ընդունվելի նա զգաց իրական օգնություն։

ՀՀ քաղաքացի, ք. Երևան

Հասարակության զգակի մասն արագ լրեղավորվեց այս արագավոր ընդունական համակարգի մեջ, դարձավ նրա մի մասը։ Եվ այսօր հանրության մի մասն ընդհանրապես պարզապես չէ զնալ ընկրութեղամաս առանց ընդունակաշառքի։ Մենք այս առումն շատ փշացրեցինք մեր հասարակությանը, և դա ունի իր օբյեկտիվ հիմքերը։ մարդը հակացավ, որ իր քվեն դրաբենի ընդունակությունը ոչնչ չի որոշել։ Այսօր շատ դժվար է հանրությանը բացաբերել, թե՝ մի անգամ էլ փորձիր, իսկ մարդը դեռնում է, որ քվեարկում է «X»-ի օգիքին, բայց միևնույն է զրվում է «Y»-ի անունը։

ԱԺ 2007 պարզամավորության թեկնածու
«Բարգավաճ Հայասպան» կուսակցություն

Հասարակության կողմից հարմարվելու այս ձևը ոչ միայն անզորության զգացումի հետևանք էր, այլև՝ վստահելի քաղաքական այլնութանքի բացակայությամբ պայմանավորված թերահավաստության և անորոշ ապագայի նկատմամբ անհանգստության արդյունք։ Այս պայմաններում հանրության մի մասը Ազգային ժողովի ընդունակություններից առաջ գերադասում էր իրեն չբավարարող, բայց տեսանելի ներկան։

Իշխանությունը միանգամից զսրահել ուրիշներին շատ բարդ գործ է, որովհենու չփրին, քեւ հեղազայում դա ինչպես կանդրադառնա քեզ վրա:
ՀՀ քաղաքացի, ք. Երևան

Այսպիսի ընդդիմություն, որի շուրջ հասարակությունը կմորիխզացվեր, դժբախտաբար չկա: Եթե հասարակությունը չի ունենում համախմբվելու արժանի առաջնորդ, քաղաքական ուժ, շատ մեծ դաշտ է քացվում արարավոր երևությունների ծաղկման համար, որոնք էլ ընկրությունների ընթացքում անձնողակի դրակոնում են: Հասարակության պառակտվածությունը ամենապարագ հողմ է այդպիսի անշանց համար, և իրենք ամեն ինչ անելու են, որ այդպիսի համախմբում հասարակության մեջ տեղի չունենա:

Արմեն Ռուսամյան
4-րդ գումարման ԱԺ պարզամավոր
«Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցություն

Հարմարման արդյունքում, չնայած համընդհանուր դժգոհությանը, հասարակության մեծամասնությունը մասնակցում էր համակարգի իներտության պահպանմանը. այդպիսով քաղաքացիները դարձել են քաղաքական դիսթունկցիոնալ համակարգի մասնիկը մի կողմից, և գերին՝ մյուս կողմից:

Սակայն իրերի դրությանը հարմարվելը ոչ միայն անհատական ընտրության արդյունք էր, այլև իշխանական ուժային՝ ռեպրեսիվ մեքենայի «արդյունավետ» աշխատանքի հետևանք:

Մենք էլ մեր մեղքի բաժինն ունենք, ժողովուրդը խսդապահանջ պետք է լինի: Ամեն ինչի հետ հարմարվում ենք, սուս ենք անում:

ՀՀ քաղաքացի, ք. Երևան

Թեկուզ իրավունք էլ իմանաս, փողոցում կանգնած ես, և ամեն դեղը եկամ քեզ բռնկեցին-դարան: Ասում ես. «Որդե՞ն է սանկցիան, որ ինչ կալանավորել եք»: Ասում եմ՝ մի բռնկ, դանում են դարարան, «սուրվեն» օդից տախի են... «խովհանություն փողոցում», մի հոգի էլ վկա՝ վերջ: Եմ իրավունքն ո՞ւր կորավ: Ես գիրեմ, որ ինչ առանց կասկածելու իրավունք չունեն, բայց... իրենք են, ինչ ուզում են, իրենց ծեռքին է՝ միլիցերի, դարախազների և այլն:

ՀՀ քաղաքացի, ք. Վանաձոր

Վերջին երեք տարիներին քաղաքական թեմայով հանրային կարծիքի ուսումնասիրման ժամանակ հետազոտողները մեծ խոչընդոտների էին հանդիպում. մարդիկ խոսափում էին անկեղծ արտահայտել իրենց կարծիքը և այս կամ այն իշխանական դեմքի նկատմամբ վերաբերմունքը: Հատկապես նախընտրական շրջանում լուրջ ջանքեր էին պահանջվում հանրության իրական տրամադրությունների, դիրքորոշումների և մտահոգությունների բացահայտման համար: Հարցազրոյցների ժամանակ մարդիկ նախընտրում էին անդեմ «քողոքը», չէին մատնանշում հիմնախնդիրների պատասխանատուններին: Միևնույն ժամանակ ակնկալիքները ևս անհասել էին, պարզ չեր, թե հատկապես որ քաղաքական դերակատարներից կամ ինստիտուտներից էին հասարակության սպասելիք-պահանջները: Հաճախ բարձրաստիճան իշխանավորների կոնկրետ անուններին քաղաքացիների արձագանքը լուրջունն էր՝ վախի խոսուն արտահայտությունը: Հասարակության անզրոյդության զգացումը իշխանության ջանքերով գուգակցվում էր վերջիններիս ամենազրոյթյան հետ. ոչ միայն անիմաստ է և անհնար որևէ բան փոխել, այլև վտանգավոր:

Հանրության շրջանում վախի տարածումը իշխանության անպարտելիության մասին միֆերի շրջանառման և կոնկրետ սպառնալիքների միջոցով ընդունված էր դեռևս մինչև ԱԺ 2007 ընտրարշավը: Խակ նախընտրական շրջանում և քվեարկելիս վախի ամենից հաճախ հարուցվում էր աշխատանքից զրկվելու սպառնալիքը: Սա վերաբերում էր ոչ միայն պետական, այլև մասնավոր հիմնարկներում գրավածներին և իրենց ընտանիքի անդամներին, քանի որ աշխատատեղ ապահովող տնտեսվարող սուրյեկտները մեծամասամբ սերտ առնչություններ ունեին իշխանական համակարգի հետ:

Որպես բյուջեի աշխատային հիմնարկի աշխատող՝ մարդկանց մեծամասնությունը հարկադրաբար մկնում է որևէ կուսակցության շարքերը, և նրանց սրբազնությունը էլ, որ աշխատեն քարոզարշավի ուղղությամբ:

ՀՀ քաղաքացի, ք. Երևան

ԵԱՀԿ/ԺՀԾՄ-ը Ասև հայրարություններ է լսել այն մասին, որ որոշ ընկրողներ ճաշման դրակ պետք է քվեարկեն որոշակի կուսակցությունների կամ թեկնածուների օգտին՝ վախենալով հեղուանքներից, ինչպիսիք են օրինակ աշխարհանքից հեղացումը: Սյունիքի մարզից մի թեկնածու (և գործող պարզամավոր) հասպարել է, որ իր սեփականությունը հանդիսացող

ինչոր չեռնարկության աշխարհողմներ պարփակոր են քվեարկել իր օգտին, սակայն նրա բնորշմամբ՝ դա համահունչ է գորալ կորպորատիվ կառավարման ժամանակակից ոճին:

**«Հայփարարություն նախնական հայդարերումների և եզրակացությունների վերաբերյալ», 13 մայիսի, 2007 թ.,
Ընդունումների միջազգային դիվորդական առաքելություն**

Զանազան ձևերով սպիտակում են մարդուն քվեարկել իր կամքին հակառակ, և սպիտակում պարփառիր չէ, որ գեղի ունենաւ հենց քվեարկության գեղամատում, մինչ այդ է լինում, և սա լուրջ պրոբլեմ է առաջացնում Հայաստանում:

Արմեն Ռուսամյան

4-րդ գումարման ԱԺ պարզամագլոր
«Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցություն

Իհարկե, դժվար է գնահատել վախի հիմնավորվածությունն իրականում, սակայն ակնհայտ է, որ առօրյա կենսաապահովման պայմանների կախվածությամբ և անձնական անվտանգության սպառնալիքով պայմանավորված վախերը հասարակության անդամների քաղաքական և քաղաքացիական վարքագծի վրա փաստացի ազդեցություն ունեն:

Ընդունության օրերին կգան, զենքը կդնեն զլիսիդ, կասեն՝ սրան ընդունիր: Իրավունքին ո՞վ է նայում:

ՀՀ քաղաքացի, ք. Երևան

Բոլորը բոլորից վախենում են. ուստիկանից վախենում են, զինվորից վախենում են, քաղայինից վախենում են, Ժեկ-ից վախենում են և չեմ հասկանում՝ ինչի՞ համար...

Ամեն մենքը Հայաստանում ունի մի փոքրիկ աղբյուրիկ և վախենում է կորցնել այդ աղբյուրիկը, ոչ մենքը չի մրածում, որ կարելի է այդ փոքրիկ աղբյուրիկները միացնել գեկ դաշնել և՝ օգնել ուրիշներին: Ամեն մարդ միայն իր աղբյուրիկի շուրջ է համախմբված:

Սարգսի Հացպանյան

Հարաբաղյան պատերազմի մասնակից

Հասարակական տրամադրությունները կառավարելու մյուս միջոցը արտաքին սպառնալիքների շահարկումն էր՝ Նարաբաղյան պատերազ-

մի վերսկսման, պետության կայունության և անվտանգության կորստի վախերի ձևավորմամբ:

Իշխանական բուրգն է վախի մթնոլորդ սրեղծում. ժողովրդին քարոզում է, որ եթե իրենք չլինեն, պարփակմը կավի, և կարպվենք. իսկ իրենք հաղթող են և պետք է իրենք մնան, որ հաղթենք: Վախի մթնոլորդ են սրեղծում և հենու այդ վախի դեմ խաղաքարդ են հանում, որը միշտ իրենց է միավոր բերում:

Գագիկ Արգարյան

«Ժամանակ Երևան» օրականը
լրագրող

Դարաբաղի հարցը խաղարկվում է որպես խաղաքուղք ժողովրդավական արժեքներից նահանջն արդարացնելու նպարակով՝ հանրահավաքների ու երրերդ կարող են վնասել ազգային անվտանգությունը, և այլն: Երբ ես խոսում եմ լրաբեր փոքր ազգերի ներկայացուցիչների հենք, պարզվում է, որ իրենց մոտ էլ է նոյմար. հենց որ ազգային անվտանգության գաղափար են բերում մեջբեղ՝ որպես խաղաքուղք, ժողովուրդը ամեն ինչ դադարում է և վախեցած ատում է. «Այս, գերնպարակ ազգային անվտանգությունն է, մենք փոքր ենք, մենք պետք չեն ընդվզել»: Բայց իրականում պարզ չէ՝ ազգային անվտանգությունը որքանով կվնասվեր, եթե այսինչ գործողությունը կարարվեր: Այսինքն՝ այդ գաղափարը շահարկվում է:

Արմ Ղազարյան

իրավաբան

Նման պայմաններում, երբ քաղաքացիների ընտրական վարքը հիմնականում ուղղորդում էին հասարակական ապաթիան, օտարվածության, անզորության զգացումը և արտաքին ու ներքին սպառնալիքներից զանազան վախերը, հասարակության՝ իրեն քաղաքական սուրբեկությացման հարցը խնդրահարուց էր դառնում: Իրավիճակն ավելի էր բարդանում, երբ դիտարկում էինք անկախ Հայաստանի հասարակության կայացման տցիալական ռեսուրսները: Արժեհամակարգի վակուում, ներքին միգրացիոն հոսքեր և արտագաղթ ապրող հասարակությունն իր ներսում արդեն ուներ հրատապ խնդիրներ, որոնց գումարվում էին քաղաքական համակարգից բխողները: Ներկայիս խաղի կանոնների արդյունքում հայաստանյան հասարակության նոր ստրատիֆիկացիայի միակ հիմնարար գործոն էր դարձել տնտեսական ռեսուրսը, ինչը սովորաբար զուգակցվում էր իշխանական ռեսուրսի հետ: Այս հանգա-

մանքը լրիշ հետևանքներ էր առաջ բերել հայ հասարակության կառուցվածքում: Նոր «վերնախավը» տիրապետում էր միայն տնտեսական և իշխանական ռեսուրսի առավելությանը: Իսկ քանի որ այդ առավելությունը ձեռք էր բերվել անհավասար մրցակցային պայմաններում, ապա այն պահպանելու միակ գրավականը անհավասարության պահպանումն էր, ինչը հասարակության ներսում շերտերի միջև մորիլությունը դարձնում էր անհնար: Ասել է թե՝ հասարակության ներսում կանգ էր առել առողջ շրջապատույտը, որը պետք է բերեր վերնախավի անընդհատ թարմացման հնարավորությանը և իմբր դառնար հասարակության զարգացման համար:

Այսպիսով, քաղաքական համակարգի լճացումը հանգեցրել էր հասարակական լճացման: Անհավասար հնարավորությունների համատեքսում, երբ ներքնները սեփական ուժերով չեն կարող վեր բարձրանալ, միաժամանակ գործում էր «վերնախավը» թարմացման մի մեխանիզմ. այստեղ հեշտ էր մոտաք գործել, եթե ընդունում էիր իշխանական դերակատարների սահմանած խաղի կանոնները:

Ըստ իշխանությունն ունի «Հանրապետական» թև, որը տիրապետում է հակայական վարչական և օլիգարքիկ ռեսուրսների, որով բավականին լրիշ դերակարգությունն էն սրանքի ունակությունը: Ի հակադիր դրամ՝ Շոշարյանի թևը, որպեսզի ամեն ինչ չըրա Հանրապետականին, իր համար արեղծել է «Քարգավաճ Հայասպան» կուսակցությունը: Որոշակի դերակարգությունն ունի նաև Դաշնակցությունը, որին որպես կանոն չեն ցանկանում դիմուն ընդդիմության մեջ, որովհետո դրանում լրիշ վրանգ են դիմուն, բայց նաև չեն դիմուն իշխանության մեջ ավելի մեծ դերակարգությամբ, որովհետո դրանում էլ են վրանգ դիմուն: Նրանց համար գործ են մի մողել որից ավելն էլ է վրանգավոր, պակաս էլ: Այս ձևով են նրանք ներկայացված, իսկ մյուսները «և այլն»—և են, որոնց ասվում է. «Ով այս խաղի կանոնները կը նդունի, նա էլ բող զա դրանում դիմակորվի»:

Եղարդ Անդիմյան

Հայասպանի ազատական առաջադիմական կուսակցություն
քաղաքական խորհրդի քարտուղար

Հաձախ վերնախավն ինքն էր սեփական շարքերն ընդգրկում և իշխանական ռեսուրսներ շնորհում իրենց կանոններին լոյալ տնտեսական ռեսուրսակիր դերակատարներին: Մրանով էր բացատրվում նաև որոշ

նորահայտ ռուսաստանյան մեծահարուստների կամ նրանց հարազատների առկայությունը հայաստանյան քաղաքական արենայում:

Ուստարականում հայկական սփյուռքը վերջին գրարիներին շար մեծ ռեսուրսների է տիրապետում ի հաշիվ Ռուսասպանի գլուխական ամբ: Այնպես բիզնես շրջանակները մի դրսակ էջքրիայի մեջ են, որ իրենց ունիցվածքով և ռեսուրսներով կարող են մարմնել և այսպես հազար ու մի քանի անել: Իհարկե, նրանց գործությունը շար մեծ ազդեցություն ունի և առանձին կուսակցությունների վարքի, և ընդհանուր մքնարդությի վրա: Ազդեցությունը ունեն այս կամ այն քաղաքական ուժին աջակցելով՝ քողարկված կամ բացահայտ ձևով ֆինանսներ տրամադրելով: Դա դրսակների է և «Քարգավաճ Հայասպան», և «Հանրապետական» կուսակցությունների դեպքում: Նրանք իմնականում համագործակցում են կամ իշխանական ուժերի, կամ փոքր իմնիքներ դնող ընդդիմության հետ:

Քորիս Նազարյան
«Երևանի մասունք ակումբի» նախագահ

Միաժամանակ հասարակության մյուս՝ ոչ «էլիտար ու աննախադեպ» շերտերում, խաղը ստրատիֆիկացիայի, ինչպես նաև խոսքի ազատության սահմանափակումների և արիեստակցական միությունների փաստացի չգոյության պայմաններում հանրային համատարր խմբերի կոմունիկացիոն հնարավորությունները խիստ նվազ էին, ինչը խոչընդոտում էր նրանց ներքին համախմբմանը: Իսկ սեփական շահերը պաշտպանելու և արտաքին վտանգներին դիմակայելու կարողությունն առկա է թիս թե շատ համանան մտահայեցողություն, աշխարհայացք և ենթամշակույթ ունեցող անձանց շրջանում: Հայաստանում նման օրինակ էին միևնույն լոկալ գոտիներում՝ գյուղական համայնքներում բնակվող համագյուղացիները. օրինակ՝ հայտնի էին դեպքեր, երբ գյուղացիները սեփական խնդիրների լուծմանը հետամուտ լինելու համար միասնական ուժերով փակել են գյուղամիջով անցնող հանրապետական նշանակության մայրուղին: Այնուհանդերձ, համատեղ պայքարի բացասական փորձը և հաղթական ելքով նախադեպերի պակասը իրենց հերթին խոչընդոտում էին սոցիալական հաղորդակցության և համագործակցության հնարավոր զարգացմանը նույնիսկ միևնույն համայնքի ներսում:

Ասում են՝ «գյուղ կանգնի գերան կկուրիի», բայց մենք ամբողջ գյուղով կանգնել ենք, ոչ մի քանի էլ չենք հասել: Ցուց է՛լ ենք արել, մայրուղին է՛լ ենք

փակել կիմ-դրամարդով գնացել ենք մարզկենպրոն՝ ջրի համար բռղոքելու, բայց մեզ ոչ ոք բանապետ չի դրել: Հանրապետական նշանակության ճանապարհը որ փակել էինք, ոչ մենք շարցրեց, թե ինչ է ծիր ուզածը: Եկան բոլորին հավաքեցին-դրաբան, մեր հարցերը լուծեցին-բողոքին: Հարց լուծելը ո՞նց քե որն է, չգիտե՞ք քաղմատում հարցերը ո՞նց են լուծվում, ցուցերի համար ի՞նչ են անում....:

ՀՀ քաղաքացի, Արմավիրի մարզ

Ինչևէ, հասարակության ներսում գործընթացները կանգ չեն առնում: Մի կողմից ընդհանուր մասշտաբներով սերունդը սոցիալիզացվում էր ուարիզացված մշակույթի ոչ ֆորմալ, կիսաքրեական, «գողական» կանոններով, ինչն ընդունվում և ինստիտուցիոնալացվում էր քաղաքական «վերնախավի» կողմից, և ամրապնդում էր հետադիմական հասարակական մտածողությունը (ուարիզացիան ու գողականությունն արդեն դոմինանտ մշակույթի մաս ու ի հիմնական հոսանք էին դարձել, և որպես մշակութային տարրական էկեմենտներ՝ հաձախ նույնիսկ նկատելի չեն և արտասովոր չեն համարվում հասարակության ներսում): Մյուս կողմից, սրան հակառակ, բարձրանում էր քաղաքացիական գիտակցությունն արևմտյան մշակութային հոսանքներով սոցիալիզացված երիտասարդների շրջանում:

Հասարակության ներսում նկատվում էին նաև հասարակագիտական-փորձագիտական մտքի աշխատացման միտումներ. ձևավորվում էին ակումբային փորձագիտական խմբեր, գրվում էին սուր քննադատական քաղաքական էսսեներ⁵, գոնե մայրաքաղաքում գարզանում էին ինտերնետային տեղեկատվական և ցանցային հաղորդակցության միջոցները, ինչպես օրինակ՝ էլեկտրոնային մամուլը, ֆորումները, անձնական բլոգերը: Փորձագիտական միտքը հաձախ ուղղորդվում էր Հայաստանում հասարակական արատների քննադատությանը և հանրային ախտերի պատճառների բացահայտմանը: Զուգահեռաբար զանգվածային հանրության ինքնագիտակցության մեջ ևս տարերայնորեն ձևավորվում

էր ինքնաբնադատությունը, որը զուգակցվում էր «Էս չենք մենք» բանաձևի հոռեստեսական տրամադրություններով:

Ընդ որում, այս տրամադրությունները սնուցվում էին քաղաքական հիմնական դերակատարների կողմից: Շատ հաձախ շրջանառվում էին իշխանական դաշտից հնչող և շահարկվող տեսակետներ, ըստ որոնց՝ քաղաքական համակարգի անսարքությունների պատճառը հասարակության անպատճառությունն էր ժողովրդավարությանը: Այս շարքին էր պատկանում նաև դեռևս 2003-ին Սերժ Սարգսյանի տեսակետը՝ ժողովրդավարության մասին եվրոպացիներից տարբերվող հայկական մենթալիտետի վերաբերյալ⁶: Այս մեխանիզմով քաղաքական համակարգի արատավորության հիմնական պատասխանատվության կրողն էր դառնում հասարակությունը:

Մեր քաղաքացիների մի մասը չի ցանկանում ակտիվ լինել, ոչ միայն ընկրույթուններին, այլև առհասարակ պետական շինարարությանը, որովհեկը մեզ մույր դուռս կունութիզմից մնացել է կունութիզմական շարիքը, որ մարդիկ պետպությունից միայն սպասում են, և իրենց քվում է, թե պետպությունը իրենց համար միշտ պիտի հոգ գրան՝ մինչդեռ շուկայական հարաբերությունները լրիվ այլ են: Քենաչոր խոսքերն են. «Ոչ թե պիտք է պետպությունը անի քեզ համար, այլ դու պետք է մշրագեն մրածնե, թե ինչ կարող ես անել պետպության համար»: Եթե յուրաքանչյուր քաղաքացի իմանա, որ ինքն ավելի շատ և առաջին հերթին պարտականություններ ունի, քան իրավունքներ, քննականաբար, Հայաստանում նաև քաղաքացիական հասարակությունն ավելի ծնավորված կլին:

Հայաստանում սոցիալական քենացումը մեծացել է, սոցիալապես անապահով խավը զարգացած չէ ու խոցելի է, և քննականաբար աղքատ երկրում չի կարող լինել դեմոկրատիա: Ինչքան ժողովրդի կենսամակարդակը բարձրանա, այնքան քաղաքականը կավելանա, պարահական չի, որ Սերժ Սարգսյանն ասաց, որ դժվար է խոսել ժողովրդավարությունից և մար-

⁵ Օրինակ՝ 2007-ին Երևանի գրախանութերում հայտնվեց Արտյոմ Խաչատրյանի (Գագիկ Սարգսյան կենցանունով) «Չոն Պազոլինիին» քաղաքական քննադատական էսսեների ժողովածուն: Նայտնի է նաև, որ Հայաստանից դուրս ստեղծագործում են վտարանդի հրապարակախոս գրողներ, ովքեր Հայաստանի քաղաքական իրողությունների շուրջ իրենց դիտարկումների մասին հրապարակայնորեն հայտարարեցին 2006 թ. նոյեմբերին «Ահազանգ» կոչով (տես www.vernatun.info):

⁶ 2003 թ. ՀՀ նախագահական ընտրություններին Սերժ Սարգսյանը իշխանության թեկնածու՝ գործող նախագահ Ռ. Պոչարյանի նախընտրական շտարի պետն էր: ԵԱՀԿ ու ՍՊՀ դիտորդական առաքելությունների կողմից տրված իրարամերժ զնամանականների առնչությամբ Ս. Սարգսյանն ասել էր. «ՍՊՀ դիտորդները շատ ավելի են ծանրո մենթալիտետին, մեր հրականությանը: Իսկ մարդիկ, որոնք ծնվել և ապրել են եվրոպացիներում, նոանց երևի չեն կարող բացատրել մեր հրականության որոշ երևույթներ: Եվրոպացիներն ապրում են այնպիսի հասարակության մեջ, որտեղ այլ պատկերացումներ կան ժողովրդավարության մասին» (աղյուրը՝ «ԵԱՀԿ-ն չի զգում հայ մենթալիտետը», Հայկական ժամանակ, մարտ 8, 2003):

դու իրավունքներից, քանի դեռ մարդկանց սոցիալական ինտիրմները լուծված չեն:

Եղուարդ Շաբամազնով Հայաստանի հանրապետական կուսակցության մամր խոսնակ

Սահմանադրության առաջին հոդվածը, որ իշխանությունը պարկանում է ժողովրդին, դժբախտաբար դեռ թղթի վրա է: Ժողովուրդը ինքը պետք է իր իշխանության մասը չգիշի ուրիշին: Մեր ժողովուրդը դժբախտաբար դեռ չի հասկ այս շաբ պարզ ճշնարկությանը, որ ընկրություններն են այն գրեթե, որպես ինքը կարող է ազգել իշխանության չև ավորում վրա: Այդ մասը ամեն մեկին փոքր է թվում, բայց այդ փոքր մասերը գումարային սպացվում են այն իշխանությունը, որը ժողովուրդը իր ճեղքում պիտի պահի:

Արմեն Ռուստամյան «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցություն

Այսահով, քաղաքական գործնքացներից հասարակության արտամդապությունը պարզաբեն մասնակցության բացակայություն չէ, այն նաև հանգեցնում է հասարակական և քաղաքական լուրջ հետևանքը՝ ների փոխկապացված թնջուկի: Հասարակության օտարվածությունը, ապարիան, որևէ դրական փոփոխության հանդեպ թերահավատությունը, լինելով ախտահարված քաղաքական համակարգի հետևանքը, դառնում են նոյն համակարգի վերարտադրման պարարտանյութը. անզոր ու օտարված հասարակությունն ինքը դառնում է արատավոր շրջանի մասնակիցը: Արդյունքում դեֆորմացվում են հասարակական կառուցվածքը և հասարակության բարոյակարգը, ամրապնդվում են հետադիմական ինստիտուտները, խաթարվում զարգացման առողջ մեխանիզմները:

Այս իրավիճակից ենքը քաղաքացիական դիրքորոշման ձևավորումն ու ժողովրդավարական սկզբների իրական գործարկումն է:

Ես գիտում եմ՝ շաբաթերելը, գործողությունների շփմելը ոչ քաղաքացիական դրաւորում է, դարձեք այս պետքության քաղաքացին և իրու քաղաքացի պահանջապեր եղեք: Ֆրանսիայում, օրինակ, ցանկացած հարցում քաղաքացին ինքն է որոշում՝ ինչ անել և պարփառում է այդ որոշումը իշխանություններին:

Սարգսի Հացպանյան Հարաբաղյան պարերազմի մասնակից

Միայն մի զաղափար է պետք հասկանալ, որ մեր երկիրի իսաղաղությունը ժողովրդավարությունն է: Մինչև մեր ժողովուրդը չհասկանա, որ ժողովրդավարության մեկ գրեսակ կա, ոչ թե երկու գրեսակ՝ ամերիկա-և վրուստական մողել և ԱՊՀ-ական, մինչև չհասկանա, որ դա է ապագան, դա է մեր իսաղաղությունը, ոչինչ չի կարող փոխվել: Եթե մեր ժողովուրդի զարգացումը համեմատենք 2003-ի, 1995-ի կամ 1996-ի ենք, իհարկե զարգացում կա: Բայց դա դեռ բավարար չէ: Ըստ դանաշաղ է առաջ գնում: Նոր-նոր են սկսվում զնահակը ժողովրդավարական արժեքները:

Արա Ղազարյան Իրավաբան

Ժողովրդավարությունը ամենածախսաբար և ժամանակագրաբար մողել-ներից մեկն է, բայց միաժամանակ ամենալավ արդյունքն է փախի: Ժողովրդավարությունն ինքնարդինը չի կարող արենդվել կարծում եմ, որ այդ համակարգը պետք է կարողանանք սպեհծել և օգրվել:

Տիգրան Ջրաշյան

AEPLAC հայաստանյան գրասենյակի ղեկավար Միջազգային

Իսկ քաղաքացիական բարոյակարգի ձևավորումը հնարավոր է միայն հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական շարժումների և առողջ քաղաքական ուժերի ակտիվ ջանքերով և հասարակության հետ անընդհատ տեղեկատվական հաղորդակցման մեջ լինելու միջոցով:

Ընդհմադիր կուսակցությունների դերակարպումը, զիսավոր նպատակը պետք է լինի հասարակությանն արթնացնելը, մարդկանց ակրիվացնելը: «Ժառանգություն» կուսակցության զիսավոր կարգախոսն է «Հավատ և հայրենիք», քանի որ առանց հավատի վերականգնման հնարավոր է հայրենիքը դնել ձիչը ճանապարհի վրա, վերականգնել զարգացնել և ազարել այս ապօրինություններից: Եթերորդ կարգախոսն է «Տե՛ր ես», այսինքն՝ դի՛ր ես քո երկրին քաղաքացու մով պիրոց զաղափարի արթնացմանն է ուղղված, որ նա վերջինիրդու իրեն տեղ գտն, գնա և ընկրի:

Որքան էլ փորձում են սահմանափակել ընդդիմության մուլդը հեռուստապետություն, նոյնիկ այդ չնշին մաքուր օդի խողովակը որ տրվել է, նոյնիկ այդ չնշին բրվածինը բերեց նրան, որ մարդկանց մի սպագ զանգված սկսեց վերակենդանանալ այդ բմբիրից: Որովհետև մարդիկ սկսեցին լսել ճշմարիկ խոսք երերից լինի դա Շաֆիի Հովհաննիսյանի, թե մյուս ընդդի-

մադրենիրի խոսքը: Եվ իմացես ասում են, հույսը վերջինն է մահանում. միշտ մարդկանց մեջ իմ լույսը անկյունում, հոգու խորքում հույսի փոքրիկ կրակ մնում է, և պետք է ուղղակի ճիշտ կարողանալ դա բոցի վերածել, որ մարդիկ ամեն դեպքում բարկանան, վեր կենան, գնան և ընկրեն: Ակզրից ընկրեն, հեկո երեւ չափացվի, նաև այլ միջոցներ ծեռնարկեն՝ իրենց քվեն պահելու համար:

Հովհաննեսի Խորչույժան
«Ժառանգություն» կուսակցության մամուն խոսնակ
բաղադրագիր

Մեզ մոտ ծևավորվել է և մեծ քաղաքական գործոն է ապարիան, և դա դարձաւ սկզբին բոլորի, նոյնիսկ միջազգային դիվորդների կողմից ֆիքսվում էր: Բայց միևնույն ժամանակ, գդանում են, որ քաղաքական գեիսնոլոգիաների առումով ընդդիմադիր քաղաքական ուժերը բավականին լավ են պարտասպազմել, և նոյնիսկ կարծ ժամանակում որոշ բաներ փոխվել են. գոյնեւ Երևանում բնակչության բավականին մեծ մասի մոտ հաջողվեց փոխել այդ անհյուս վիճակը: «Նոր Ժամանակակիցն», «Իմպաշմենլոր», «Հանրապետություն» ընդդիմադիր կուսակցությունները, իրար իանգարենով, միևնույն ժամանակ հասարակությանը միանանակ ակրիվացրել են: Հասարակությունը սկսել է ակրիվանակ բայց մի քիչ կարծես թե ուշացել է: Եթե այն, իմ գոյնի է ունենում այսօր, սկսվեր մեկ ամիս առաջ, իմաս ավելի առաջ կգնայինք:

Առա Գազարյան
իրավաբան

Թեև հասարակական ապարիան ու քաղաքացիական անզործությունը վերջին տարիներին այնքան էին արմատացել, որ դարձել էին կենսածն, և արթնացնել հասարակությանը այս լեթարգիական քնից թվում էր անհնարին, այնուհանդերձ, Հայաստանի հասարակությունում ինքնաքննադատման միտումները հուչում էին, որ այն ինքնառեֆլեքսիայի շրջան էր վերաբում, ինչը անհրաժեշտ նախապայման է զարգացման նոր փուլ անցնելու համար: Ուրեմն, որքան էլ հայաստանյան հասարակությունը օտարված էր քաղաքական կյանքից և ներքին պառակտվածության զգացում ուներ, ունակ փոփոխություններին հասնելու պատնեշը որոշակի պայմանների դեպքում հաղթահարելի էր թվում:

Կզա մի պահ, երբ արդեն ոչ մի հույս չի լինի, այլևս ոչ մի «փուչիկ» քաղաքական գործիչ չի լինի ընդդիմադիր դաշտում: Մարդիկ կհասկանան, որ

արդար և ազնիվ լինելը բավարար չէ ընդդիմադիր առաջնորդ լինելու և հաղթանակ ապահովելու համար, կհասկանան, որ եթե նոյնական դու անկենծ են, միևնույն է, սա քո գեղը չէ, քո ասածները չեն աշխատի այս իրականությունում: Ովքեր պրոյական չի են, նրանց էությունը լրիվ կրացահայրվի վար հասկացողների համար, քանի որ լավ հասկացողները իմաս էլ պարզ գենանում են: Իշխանական որևէ գործիչ հեկ այլևս չեն բավարար չեն ոչնինա, ոչ մի օլիգարքի այլևս չի կարող գալ ասել: «Ես հարուսար եմ, ամեն իմ բողել՝ ծիր մասին եմ մկանում», – մարդիկ էլ հեկվից գնան՝ մկանուով, որ իրենք էլ են հարստանալու: Կզա մի փուլ որ արդեն ոչնչի չեն հավաքար, և եթե այդ ժամանակ գանձի մարդիկ և իրականությունից բխող մկանված խոսքեր ասեն, իրենց արդեն համարող չի լինի, որովհեկ բոլոր կենծ քաղաքական գործիչները բարոյապես մեռած կլինեն: Եթե այդ ինելացի մարդիկ գոյնեն, թե այդ իմ զաղավար է, որ կմիավորի ժողովրդին, եթե զգնեն համահմբաման այն չենիք, որոնք ունակ կլինեն հաղթահարել հանրային առևա մկանության բացասական ազդեցությունները, ապա կունենանք շոնդալից վերելը. վերջիվերօն մեր ժողովուրդը 88 թիվ է գվել աշխարհին: Առայժմ այս աղմուկի մեջ ոչինչ անել հնարավոր չէ, պիտի սպասեն՝ այդ թոլորը «մեռնեն»: Ու Հայաստանը գնում է դեպի այդ վերելիքի նախաշեն:

Արծուան Պետական
քաղաքական միենարան

3. ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հայաստանում քաղաքացիական հասարակության ինստիտուտի գարգացման ուղին դեռևս 90-ականների սկզբից ընթացել է ոչ կառավարական կամ ոչ առևտրային կազմակերպությունների ձևափորման ձանապարհով: Դրանք մեզանում կոչվում են մեկ ընդհանրական անունով՝ «հասարակական կազմակերպություններ», կրծատ՝ ՀԿ-ներ: Տարիների ընթացքում ՀՀ Արդարադատության նախարարությունում գրանցված ոչ կառավարական կազմակերպությունների քանակը հետզհետև աճեց՝ հասնելով աննախադեպ թվի:

Եթե «ՀԿ կենտրոն» բացվեց 1994-ին, Հայաստանի Արդարադատության նախարարությունում գրանցված էր ընդամենը 44 հասարակական կազմակերպություն: 1996-ին՝ ավելի քան 1500, իսկ 2007 հունիսի դրությամբ գրանցված էին ավելի քան 4000 ՀԿ: Հաշվի առնելով, որ Հայաստանում 3. 2 միլիոն քննակշռություն, սա ՀԿ-ների համար մեծ թիվ է:

Արմեն Իշխանյան

“Democracy Building and Civil Society in Post-Soviet Armenia”, 2008

Հասարակական կազմակերպությունների մասին օրենքը 15 տրամադրությունը ունի, և ես այդ օրենքը մշակողներից մեկն եմ եղել: Նպատակ ունեինք այդ ժամանակ հնարավորին շար ՀԿ-ներ սպեկտել, որովհետիւ վերջինները նպաստում են քաղաքացիական հասարակության ձևավորմանը և իրականացնում են հասարակական վերահսկողություն իշխանությունների նկատմամբ:

Արամ Մանուկյան

«Հայոց համագյուղի շարժում» կուսակցության վարչության փոխնախագահ

Գրանցված ՀԿ-ների զգալի մասը բիզնես (BONGO⁸), կրոնական (RONGO⁹), երիտասարդական (YONGO¹⁰) կամ այլ կազմակերպություններ են, որոնք իրենց մասնագիտական, հոգևոր կամ ժամանցային ուղղվածությամբ գրավում են սպեցիֆիկ նիշա, և իրենց գործունեությունը չեն նոյնացնում քաղաքացիականին: Միևնույն ժամանակ իրենց քաղաքացիական հոչակած կազմակերպությունների մեծամասնության գոյությունը զուտ «թղթի վրա» է, և դրանցից քեզի մասին է, որ իրենցից բացի գիտեն ուրիշները: Իհարկե, կան նաև գործող ՀԿ-ներ, որոնց հիմնական առանցքը հայաստանյան հասարակության մեջ քաղաքացիական և ժողովրդավարական արժեքների սատարումն է, մարդու իրավունքների պաշտպանությունը: Այդուհանդերձ, դրանցից շատերի գործունեությունը չի համապատասխանում հասարակական սեկտորի իրական նպատակներին ու պահանջներին և միտված է ընդամենը բավարարելու սեփական անդամների գրաղվածությունը՝ գործելով մերժընդերթ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում:

Քաղաքացիական ինսպիրույթները Հայաստանում իմաստ բերգարգած են: Քաղաքացիական հասարակությունը ներկայացնող օղակների մեծ մասը, ցավոք սրբի, սպեկովի է զուր արքաքին ֆինանսական միջոցները մարտելու նպատակով: Արհեստական կառույցներ են, որոնք իրենց գործառույթները չեն իրականացնում, այլ ընդամենը գրանցեր սրբանալով՝ մարտում են դրանք, և որևէ արդյունք չի երևում:

Հովհանն Խուրշումյան

«Ժառանգություն» կուսակցության մամլո խոսնակ քաղաքագել

Մեծ մասը սպեկովում է ինչ—որ հարուկ ծրագրի համար, կարճ ժամկետով: Շատ հեշտ է ՀԿ սպեկովելը: Ծրագիրն ավարտվում է, իրենք էլ դադարեցնում են իրենց գործունեությունը: Կոնկրետ զաղավարի համար չի սպեկովում:

Արա Ղազարյան իրավաբան

⁸ Business–Oriented Non Governmental Organizations, բիզնես ուղղվածության հասարակական կազմակերպություններ:

⁹ Religion–Oriented Non Governmental Organizations, կրոնական հասարակական կազմակերպություններ:

¹⁰ Youth–Oriented Non Governmental Organizations, երիտասարդական–հասարակական կազմակերպություններ:

⁷ Ինտերնետային աղբյուրը գրքույկի տպագրության պահին հասանելի չէր:

ՀԿ-ները դեր չունեն, որովհետիւ քաղաքացիական ինսպիրույլերը ինեղարյուրված են, ինչպես քաղաքական համակարգը: Մենք ունենք քաղաքացիական ինսպիրույլերի համակարգ, որտեղ ամձերմ օգտագործում են այդ անունն իրենց շահերին հասնելու համար: Չի կարող լինել զարգացած քաղաքացիական հասարակություն առանց քաղաքական և ինսպիրույլենալ զարգացած համակարգի, որանք իրար ենու կապված խողովակներ են: Չի կարող լինել քաղաքացիական հասարակություն, եթե մարդկանց համախմբման նպատակը այս կամ այս անձի շահերը կամ ֆինանսական միջոցները ապահովելն է, և ոչ թե հասարակական ծառայությունների մարուցումը:

Տիգրան Զրբաշյան
AEPLAC հայաստանական գրասենյակի ղեկավար
դիրքուստագետ

ԱԺ 2007 ընտրական գործընթացում քաղաքացիական դաշտում գործող այսպիսի ՀԿ-ների գործունեությունը հաճախ ձևական բնույթ ուներ, երբեմն նույնիսկ ժամանակավիճակ: Օրինակ, մեզ հայտնի է ԱԺ ընտրությունների անցկացման կարգի շուրջ հասարակության իրազեկման մի մեծ ծրագիր, որ «իրականացվեց» ընտրություններից մի քանի ամիս անց, եթե մեղմ ասած արդեն կորցրել էր իր արդիականությունը:

Ոչ-կառավարական կազմակերպությունների մի ստվար զանգված է գործում էր իշխանական ուժերին և կուսակցություններին տարբեր առիթներով ծառայելու և սատարելու նպատակով. դրանք այսպես կոչված արո-կառավարական, «գրապանային» ՀԿ-ներն (GONGO¹¹) էին: 2007 թ. ընտրություններին այս կազմակերպություններից շատերը հանդես եկան որպես «անկախ» դիտորդ, հրապարակավ սատար կանգնեցին իշխանական այս կամ այն կուսակցությանը, քաղաքական գործին, կամ հակառակը՝ թույլատրելի չափարածնով քննադատեցին նրանց՝ այդպիսով գրավելով քննադատողների նիշան: Իշխանականներին սատարելու գործում մեծ էր, մասնավորապես, տարբեր հայրենակցական միությունների և մեծաթիվ անդամներով ՀԿ-ների դերը: Վերջիններս ոչ միայն ակտիվ մասնակիցը դարձան ընտրությունների նախապատրաստական, քարոզչական գործընթացների, այլև գործնականում ապահովության մասին:

Վեցին իշխանամետ ընտրազանգված՝ ի հաշիվ իրենց կազմակերպության անդամների:

Հայաստանում ՀԿ սեկուրուր դեռ չևավորված չէ: Ունեն քաղաքական դերակարարում, բայց ոչ այդքան: Մեզ մոտ ավելի շատ զարգացած է հայրենակցական միությունների ինսպիրույլը՝ «Զավակիր», «Նիգ-Ապարան», «Գարդման»: Նրանք ունեն մեծ դերակարարություն, աշակցում են այս կամ այն քաղաքական ուժին: ՀԿ-ներից այսօր բավականին ուժեղ է «Երկրապահ կամավորական միությունը», որն այսօր որևէ քաղաքական կեցվածք չունի, կա հաշմանդամների «Փյուլմիկը», կամ երիտասարդական ՀԿ-ներ: Հայաստանում, բայց «Երկրապահից», ես չգիտեմ մեկ այլ ՀԿ, որը բազմահազարանոց է, և ոչ թե ձևական, այլ իրականում մարդիկ կան: Սովորաբ ՀԿ-ները բարը-բասեներկու հոգանոց են, իհարկե կամ ՀԿ-ներ, որոնք լուրջ գործում են, բայց դրանք քիչ են: Եթե անդամակցությունը ձևական է, ուրեմն դերակարարությունն էլ է ձևական: Ինչ-որ բան անում են, բայց էական չէ:

Եղուարդ Շարմազանով
Հայաստանի հանրապետական կուսակցության մամլո հուսնակ

Բազմաթիվ փաստեր կան, որ ՀԿ-ները շատ լավ համագործակցում են իշխանությունների հետ և նրանց քննադատությունն ու գործունեությունը դեղավորվում են իշխանությունների «Քուլյափության» սահմաններում:

Կենդրունական ընդունական հանձնաժողովը ընդունական գործընթացը վերահսկելու իրավունքը կտեղի է իմանականում այն հասարակական կազմակերպություններին, որոնք միանալաւ գրեթե են իշխանության վերահսկողության ներքո, և ես բացառում եմ նրանց անաշառ զնահարականը ընդունակությունների արդյունքին:

ԱԺ 2007 պարզամապորտության թեկնածու
«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն

Հայաստանում ընդդիմուրյունը բազմազիանի է: Այնպես բոլորը միևնաց մեղադրում են՝ «լայրո» (lights), «կառուցղական», «կեղծ» ընդդիմուրյուն լինելու մեջ: Բայց միանշանակ է, որ ողջ ընդդիմուրյունը տեղափոխում է իշխանական սցենարի մեջ: Իմ կարծիքով այդպիսիք են՝ «Հայաստանի դիմոկրատական կուսակցությունը», նաև Ծավարշ Քոչարյանի «Ազգային ժողովրդավարական կուսակցությունը»: Եթե նկատել եք, առհասարակ ժինանական ռեսուրս չունեցող Ծավարշ Քոչարյանը բավականին քանի քարոզարշավ է լրացնում, և իմ ունեցած տեղեկությունը այդ քարոզարշավը ֆինանսավորվում է իշխանությունների կողմից: Իշխանությունների և իշխանություններին կից որոշ գործարարների կողմից է ֆինանսավորվում նաև Մանուկ Գասպարյանի «ԺՈՂԿ»-ը և այլն: Դրանք բոլորը գործում են իշխանական իրահանգի սահմաններում՝ դրսի համար կառուցղական ընդդիմուրյան ֆուն ապահովելու և, այսպես ասած, արդար, ազայի ընդդրության խմբացիս պահպանելու համար: Այդ առումով իշխանությունները շահագործում են, որ խորհրդարանում հայրենին և՛ Ծավարշ Քոչարյանը, և՛ Րաֆֆի Հովհաննելի՝ Ամերիկայի, Արևուուրի համար:

Ես կարծում եմ, որ իրական ընդդիմուրյունն են «Իմպիչմենտը», «Նոր Ժամանակները» և «Հանրապետուրյունը»: Մյուսները, թեկուզ և պայմանավորված չեն իշխանությունների հետ, ասենք՝ «ԺԸԿ»-ն, «Ազգային միաբանությունը», այնուհանդերձ շարք լավ տեղափոխել են ընդդիմադիրի աշխատանքում ընդդիմուրյունը նրանց համար վերածվել է աշխատաբերի, և իրենք լուծում են ընդամենը խորհրդարանում լինելու խնդիր: Այսինքն իրենք չեն լուծում այն խնդիրը, որն ի սկզբան հոչակել էին:

Աժ 2007 պատգամավորության թեկնածու
«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն

Կարող եմ նշել գոնի նրանց, ովքեր գիրնում են՝ իսկապես ընդդիմուրյուն են, իսկ ովքեր իրական ընդդիմուրյուն չեն, ուղղակի անունները չեն գրա: Ամեն դեպքում դժվար է մեղադրել ինչ-որ կուսակցության մի բանում, ինչը 100%-ով չգիտեմ: Ամեն դեպքում սրանք կրահումներ են: Կարող եմ միանշանակ ասել, որ ընդդիմուրյուն է «Հանրապետուրյունը», ընդդիմուրյուն է «Հայոց համազգային շարժումը», «Հայաստանի ժողովրդական կուսակցությունը»:

«Երումը», չնայած չեմ բացառում, որ վերջինս ինչ-ինչ հարցերում որոշ զիշումներ է անում կամ ինչ-որ պայմանավորվածուրյուններ ունի՝ այս պահին մրան համարում են իրական ընդդիմուրյուն: Միանշանակ ընդդիմուրյուն է «Նոր Ժամանակներ» կուսակցությունը՝ գոնի այս իշխանություններին: Դեռ «Ժառանգության» մասին էլ չենք խոսում, այն միշտ էլ եղել է ընդդիմուրյան առաջին շարքերում իր ակրիվ գործունեության շրջանից սկսած:

Հովհան Խորշուոյան
«Ժառանգություն» կուսակցության մամուլ խոսնակ
բաղադրակիր

Ընդդիմուրյուն իրականում կա: Դա «Իմպիչմենտ» է, «Ժառանգությունը», «Օրինաց երկիրը»՝ ինչ-որ շափով: Դաշնակներն են ուզում դառնալ ընդդիմուրյուն, որպեսզի ապահովեն իրենց ապագան: Բայց դակելով գործողություններից՝ ուղիկալ ընդդիմուրյունը «Իմպիչմենտ» դաշնակն է:

Արա Ղազարյան
իրավաբան

Կուսակցությունները կարող են իրենց ընդդիմադիր կամ էլ համաշխարհային հոչակել: Հոչակելն այլ բան է, գործը՝ բոլորովին այլ: Մենք սկսել ենք այս պրոցեսը և գնալու ենք մինչև վերջ: Այս ընթացքում հարակ զիծ է քաշվելու, թե ով է ընդդիմադիր, ով՝ ոչ: Անձամբ ինչ համար այդ զիծը քաշված է, և ես գիտեմ, թե իրականում ով է ընդդիմադիր, ով՝ ոչ:

Նիկոլ Փաշինյան¹⁸
«Իմպիչմենտը բաղադրական համակարգին»
<http://www.168.am/am/articles/9969>
Մարտ 28, 2007

«Ժողովրդական կուսակցությունը» ամենավատ արգահայտված պրոյական ձիուկն է, որի պակլերը Տիգրան Կարապետիչի ադամանդակուու զլուկն է, բայց ներսում ՀՀԿ-ի ռեզերվային ցուցակն է, թեև այն հակայական համարում ունի լյուսպեն-արողելիքարիալի մուգ: Եթի կան լրոյական ձիուկներ, օրինակ՝ ինչ համար կարող է հարցական լինել, թե ինչու է «Ազգային միաբանությունը» ամեն ընդդրությունից առաջ մեկմացնում իշխանությունների նկատմամբ իր ըննադարական գորնը... Իսկ անման կակածներ կային և Օրինաց երկրի հանդեպ, որը ոչ վաղ անցյալում իշխանության դաշնա-

¹⁸ «Հայկական ժամանակ» թերթի գլխավոր խմբագիր, «Այլընտրանք» նախաձեռնության համակարգող, Աժ 2007 պատգամավորության թեկնածու, «Իմպիչմենտ» դաշնակ:

կիցն էր, և «Ազգային միաբանության» համեմատ հաշվի առնելով ոչ վաղ անցյալի իրողությունները՝ 2003-ին Ա. Գեղամյանի չմիանալը ընդդիմությամբ:

Անա Խորայելյան
«Առավոր» օրաբերք
լրագրող

Դեռևս պարզ չէ, թե որ ուժերն են իշխանական, որոնք՝ ընդդիմադիր: Այնպիսի երկիմաստ քաղաքական ուժեր, ինչպիսին «Օրինաց երկիր», «Դաշինք» կուսակցություններն են, փորձում են ներկայանալ որպես ընդդիմություն, քանի որ դա առավել հարմար քաղաքական նիշան է:

«Հին» ընդդիմադիր ուժերը, ինչպես «Ազգային Միաբանությունն» է, ՀԺԿ-ն և այլն, ցուցադրում են սիփական հավակնությունների լրջագույն դրսւորումներ, ինչը նրանց խանգարում է մյուս ընդդիմադիրների հետ դաշինքի մեջ մրգնել: Հաշվի առնելով, որ այս կուսակցությունները նախորդ ընկրություններում բավականին խճանուկ արդյունքի հասան, նաև այս, որ 2005 թ. սահմանադրական հանրավեկից հետո պարզ դարձավ, որ բոլոր դեպքերում որոշիչը ոչ թե քվեն է, այլ արդյունքներ նկարողը, կարելի է մրգածել, որ իշխանությունները սրանց արդեն 5% խոսպացել են: Նման կասկածի դեպքում անգամ շատ դժվար է ընդդիմության նախորդ առանցք հանդիսացող Սպեկտան Դեմիրճյանին այլևս ընդդիմադիր համարել:

Աղասի Ենոքյան
«Ընկրություններ-2007. նախընդրական շրջան»
http://www.echannel.am/?topic_id=81
Մարտ 5, 2007

«Օրինաց երկիր» պարագան յուրահատուկ էր այն իմաստով, որ այն, դուրս մղվելով իշխանական դաշտից և ընդդիմադիր ընկալվելով իշխանության ներսում, այնուամենայնիվ շատ քիչ ժամանակ ուներ հասարակության և քաղաքական հանրության շրջանում իրական ընդդիմադիր ընկալվելու համար: Այն հայտնվել էր «մերոնց մեջ օտարի և օտարների մեջ մերոնքականի» իրավիճակում:

Ընդդիմադիրներն այնքան անմիանական են գործում, որ երբ ընկրություններից առաջ «Օրինաց երկիր» կուսակցության հանձնաժողովի անդամներին ահաբեկում են, որևէ այլ ընդդիմադիր ուժ չի մրահոգվում՝ գոնե

հանուն իրենց չայնիրի, քանի որ ՕԵԿ-ի կորցրած ամեն չայնը, ի վերջո, նաև ընդդիմության չայնն է:

Անա Խորայելյան
«Առավոր» օրաբերք
լրագրող

Ընդդիմություն լինելը շահեկան է դարձել ՕԵԿ-ն այդպես արեց: Շահեկան է դարձել ընկրություններից առաջ ընդդիմություն գնալը, որ ընդդիմադիր էլեկտրոնափոխ չայները վերցնենք ու լացնենք: Եթե Արքուր Բաղդասարյանն ասում է, որ մենք են կարող էլեկտ իշխանության մեջ մնալ են էլ պետք է ասեն, որ՝ այս իշխանություն մնալը ոչ թե բերկրանք ու հաճույք է, այլ պատրաստանարվություն է:

Եղուարդ Շարմազանով
Հայաստանի հանրապետական կուսակցության մամլո իսունակ

Կենդ ու իրական ընդդիմադիրների շփոթք սնուցվում էր նաև շշուկների տարածման եղանակով: Այսպես, առկա քաղաքական համակարգի դեմ ամենամերժողական կոչերով թեմ ելած ընդդիմադիր դաշինքը՝ «Իմափիշմենտը», մեղադրվում էր իշխանականների հետ ամենասերտ հարաբերությունների մեջ: Նախընտրական շրջանում պետական օդակներին մոտ կանգնած ծանրոնների միջոցով կամ այլ «հավաստի» աղբյուրներից քաղաքացիները հաճախ «տեղեկանում» էին, որ «Իմափիշմենտը» Սերժ Սարգսյանի ձեռքի գործն է, և դա ամրապնդվում էր ԱԺ ընտրություններին ամենաշրջանառվող ասելոսով. «Նիկոյն ամեն շաբաթ այցելում է Սերժին»: Հասարակական ընկալումներում այնքան արմատացած էին իշխանության կողմից քաղաքական համակարգի տոտալ վերահսկման մասին պատկերացումները, որ դժվար էր հավատալ, թե առանց հովանավորչության հնարավոր էր Երևանի փողոցներում հնչեցնել «ոչ դոդացմանը, ոչ սերժանտացմանը, ոչ որբուտացմանը» կոնկրետ իշխանավորներին թիրախ դարձնող համարձակ կարգախոսը և «ողջ ու առողջ» մնալ:

«Իմափիշմենտ» դաշինքը, «Հանրապետություն» և «Նոր ժամանակներ» կուսակցություններն իրենց հերթին իշխանության հետ գործարք կնքելու մեջ իրապարակավ մեղադրեցին «Արդարություն» դաշինքի միակ հետնորդը մնացած ՀԺԿ-ին՝ ակամա մասնակցելով քաղաքական պայքարը ընդդիմություն-իշխանությունից դեպի ընդդիմության ներս տեղափոխելու իշխանահածո ծրագրին:

«Հայաստանի ժողովրդական կուսակցությունը» Ազգային Ժողովում լրի՝ չունի: Դեռևս անցյալ տարի Ռ. Քոչարյանը լրաբանի հեղող դեկադարմանը հետ փակ հանդիպման ժամանակ ասել էր, որ ՀԾԿ-ն չի անցնի 5%-ը, և իմաս նրանց նախկին գործընկերները, օրինակ՝ «Հանրապետությունը», իրենց վերջին հայրարդություններով զգալիորեն նպաստեցին, որ կյանքի կոչվի Ռ. Քոչարյանի նախանձած սցենարը:

Անա Խորայելյան
«Առավոր» օրաբերք
լրագրող

– Վերջին շրջանում կարծիքներ են հաջում, որ «Այլընդդրանք» նախաձեռնությունը իշխանությունների ծերոք գործն է, իսկ հանրահավաքների կազմակերպությունը նպաստակ ունի կորորդ ընդդրություններից հետո մարդկանց ցուցերի բերելու ցանկությունը:

– Կարող են նաև ասել, որ «Այլընդդրանքը» հանրահավաք է կազմակերպում գաղակիկայում ինչ-որ փոփոխություններ իրականացնելու համար: Մենք հանրահավաքներ ենք կազմակերպում նրա համար, ինչի համար որ անում ենք: Մենք ասում ենք, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացին պետք է վերադառնա հրապարակ և այնուեղան չգնան: Այդ կորորդները նրանք են, ովքեր այս գրադարձում ասել են, որ իրենք գիրեն, թե ինչ անել սակայն վճռական պահին զնացել են լրու թեյ իմելու: Մեր նպատակներն ու գաղափարները հսկակ են և, կարծում են, կասկածների դրենիք չեն լրացին¹⁹:

Նիկո Փաշինյան
«Բնապահության քաղաքական համակարգին»²⁰
<http://www.168.am/am/articles/9969>
Սարտ 28, 2007

Ինչ վերաբերում է ընտրարշավի մասնակից մյուս նորեկ «Ժառանգություն» կուսակցությանը, որը գլխավորում էր Հայաստանում հայտնի գործիչ՝ առաջին արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանը, ապա այս քաղաքական ուժը կասկածելի էր թվում իր չափազանց մեղմ, քաղաքակիր քարոզարշավով, ինչը չտեսնված նորույց էր Հայաստանի «քաղաքական» մշակույթում ինքն իրեն համակարգային ընդդիմություն

հոչակող ուժի համար: Ըստ «Ժառանգության» շուրջ տարածվող շշուկների՝ այն ստացել էր ԱԺ 5%-ոց արգելքը հաղթահարելու մասին իշխանության համաձայնությունը՝ Ռաֆֆի Հովհաննիսյանի հոր՝ ամերիկահայ հայտնի գիտնական Ռիչարդ Հովհաննիսյանի անմիջական միջամտությամբ ու նրա՝ ՀՀ իշխանությունների վրա ազդեցություն ունեցող ամերիկահայ գործիչների հետ անձնական կապերի շնորհիվ: Այս շշուկները երբեմն իրական մտավախությունների տեղիք էին տալիս:

Նախկինում ես «Ժառանգությանը» ևս կհամարեի իրական ընդդիմությունն, սակայն այսօր այն հսկակ գործում է, այսպէս ասած, իշխանությունների «դարրոյի»՝ քաղաքական բոլորության սահմաններում:

ԱԺ 2007 պարզամավորության թեկնածու
«Քարգավաճ Հայաստան» կուսակցություն

Հայաստանի փակ քաղաքական համակարգի պայմաններում արդյունավետ ազդեցություն ունեցող այս ասեկուները հանրության շրջանում ոչ միայն նվազեցնում էին ողջ ընդդիմության հանդեպ հասարակության վստահությունը, այլև ամրապնդում իշխանության ամենակարողության մասին պատկերացումները:

Այս համատեքստում ընդդիմության ցանկացած աշխուժություն դիտարկվում էր իրեն իշխանության հետ նախօրոք համաձայնեցված, փոխապայմանավորված քայլ: Համոզմունքի չափ տարածված էր այն տեսակետը, որ մուտքն Ազգային ժողովը մատչելի կլինի միայն գործարիք գնացած ընդդիմադիրների համար, ինչն էլ ավելի էր արժեզրկում ընտրական գործընթացը, որի արդյունքները թվում էին կանխորոշված:

Սպասելիքներ պրակտիկորեն չկամ, կա դադարկություն, որովհենու ի սկզբանի հասարակությանն ասել են, որ ընդդրությունների միջոցով ոչինչ չի փոփոխվելու գնաք քվեարկության, թե ոչ միևնույն է: Սա շաբ բացասական է, իսկ դա դարաձվում է և՛ իշխանության, և՛ ընդդիմության կողմից: Ի սկզբանի ասկում է, որ անցնելու են իշխանության ուժերը և իշխանահած ընդդիմադիր ուժերը, այսինքն՝ նրանց կարելի է ընդդիմություն չհամարել: Ուրեմն, ով անցնում է ԱԺ, արդեն համարում են, որ նա իշխանության հետ համագործության արդյունքում է այնպես:

Էղվարդ Անդինյան

Հայաստանի ազգական առաջադիմական կուսակցություն
քաղաքական խորհրդի քարոզուղար

¹⁹ Ն. Փաշինյանի ակնարկն ուղղված է ԴԺ դեկավար Ս. Ղեմիրյանին՝ 2004 թ. ապրիլի 12-ի դեպքերի առնչությամբ:

²⁰ Հատված Նիկո Փաշինյանի հետ հարցազրույցից:

Իմ գնահատականով այսօր Հայաստանի քաղաքական դաշըր փոշի-ացլում է. դա նշանակում է, որ ընդուրությունների քաղաքական գործընթա-ցը, որ պիտի ընթանար, այլև իր բովանդակությունը չունի. ընդուրություն-ների իմաստն ի սկզբանե խեղաքյուրված է: Յանկացած առում երկրում ընդուրությունը տեղի է ունենում իշխանության ու ընդդիմության միջև: Եթե գործընթացին նայում ենք այդ գիտականությանց, այսօր Հայաստանում այդ պրոցեսը չկա: Այսինքն՝ ժողովուրդը պարագաղոված է ընդուրություն կա-գարել ոչ թե իշխանության և ընդդիմության, այլ իշխանական երկու ուժե-րի միջև, որովհետո ընդդիմությունը ոչ միայն չկարողացավ միավորվել, այլև չկարողացավ հսկակ չնակերպել իր մկանությունները, ծրագրերը: Եվ դա, իմ կարծիքով, կարարեցին իշխանությունները՝ շատ կազմակերպ-ված և լավ պլանավորված, որի արդյունքում առաջիկայում ընդուրություններ չեն լինելու, լինելու է միջոցառում, որի իմաստը նրանում է, թե երկու իշխանական ուժերից՝ ԲՀԿ և ՀՀԿ, որոնց միջև էական տարրերություն չկա, ում ավելի շատ չայն կրան. մեկը կարան 20%, մյուսը՝ 25%, թե՝ հակա-ռակը:

Արմեն Քաղաքասարյան
«168 ժամ» թերթի փոխխմբագիր
քաղաքական մեկնարան

Ընդդիմադիր դաշտում հաջողված խառնաշփոթը իշխանությունների հաղթաթուղթն էր, ինչը նաև թույլ տվեց նրանց հանդես զալ մի քանի ձակասով: Ընդ որում, եթե ընտրություններին առանձին-առանձին մասնակցությունը թուլացնում էր ընդդիմադիրներին, ապա իշխանա-կանների դեպքում ձիշտ հակառակը՝ ավելացնում էր մրցակցային հնա-րավորությունները:

Այսպես, ընտրություններին իշխանությունը ներկայացված էր ոչ մի-այն գործող կուալիֆիայի ՀՀԿ, ՀՅԴ և ՄԱԿ անդամներով, այլև ԱԺ 2007-ին իր բարեգործական իմիջով և կուսակցությանն անդամագրման էքսպանսիվ արշավով աչքի ընկնող նորաստեղծ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությամբ:

Նախընդրական լանջաֆրի մյուս կարևոր առանձնահատկությունը քաղաքական դաշըր ծայրահեղ սեզմենտացիան է: Ինչպես իշխանական, այնպես էլ ընդդիմադիր ժամբարում նախընդրական այսաներ չձևավոր-

վեցին: Այսօր պարզ է, որ և «կարկառուն ընդդիմադիրները»՝ ՀԺԿ, ԱՄ, ՕԵԿ, և իշխանական ուժերը միայնակ են մասնակցելու ընդուրություններին:

Աղասի Ենքյան

«Ընդուրություններ-2007. նախընդրական շրջան»

http://www.echannel.am/?topic_id=81

Սարգ 5, 2007

«Բարգավաճ Հայաստանի» և «Հանրապետականի» եկրուս քաքնված ուժեր չկան, դա նոյն իշխանությունն է, որը, քանի որ ընդդիմությունը չի մի-ավորվել, հարմար է գրել հանդես զալ երկու ճակարպվ:

Արմեն Քաղաքասարյան

«168 ժամ» թերթի փոխխմբագիր
քաղաքական մեկնարան

Իշխանության կողմից «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանն ի սկզբանն շնորհված արտոնություններն արդեն հուշում են, որ այն մեծ դերակատարություն է ունենալու ապագա ԱԺ ընտրություններում՝ իշ-խանության վերարտադրման գործում: Ոչ միայն ԲՀԿ առաջնորդ՝ գոր-ծող նախագահի աջակցությունը վայելող մեծահարուստ Գագիկ Ծա-ռուկյանի անձն էր ակնարկում նախագահականի հետ կուսակցության սերտ առնչությունները, այլև դա էր արտացոլում հետագայում ձևավոր-ված թիմը, քանի որ ԲՀԿ համամասնական ցուցակում ներառված էին բարձրաստիճան պետական պաշտոնյաներ, այդ թվում՝ նախագահի աշխատակազմի անդամներ: «Բարգավաճ Հայաստան» կարծ ժամկե-տում առավելագույն արդյունքի հանելուն նպատակառուղիված նախա-գիծ էր, որը թեև ներկայանում էր այլնտրանք առաջարկող հուսորու-թյամբ, առանձնապես չէր կենտրոնանում ծրագրային դրույթների վրա և հետևողական չէր գաղափարական սկզբունքներում:

Ամենամդադիր կայն է, որ քաղաքական դաշըր այլասերելու քավա-կանին հաջողված փորձ կարարվեց: Նկատի ունեմ իշխանությունների հո-վանավորության ներքո սրբեղջված արհեստական կուսակցությունը՝ ԲՀԿ-ն, որի համար նախ սրբեղջվեցին քարոզության հնարավորություններ՝ ըստ որոշ տեղեկությունների ՄԱԿ-ի նախագահ Գուրգեն Արմենյանի սրբիական վաճառել իր հեռուստաբառներությունը Գ. Ծառուկյանին: Առաջին քայլով նախ հեռուստաբառներություն վրվեց, իսկ դա ընդուրություններում գործի կեսն է: Երկրորդ հերթին ակնհայր է, որ Գ. Ծառուկյանը և իր դեկա-վարած զանազան ընկերությունները պակաս են մուծում հարկերը, և այդ

բացի շնորհիվ նաև այդպիսի քարոզարշավ վարեց՝ բարեգործություններ, ընկրողների համար կազմակերպված շահումներ, վիճակախաղեր և այլն։ Քաղաքական դաշտ մրցվեց այնպիսի արհեստաձին կուսակցություն, որը չունի դասական կուսակցության և ոչ մի բաղադրիչ, հսկակ զաղափարախություն կամ ծրագրեր։

ԲՀԿ-ն, իհարկե, ուներ ծրագիր, որ վարչված մասնագերները գրել էին, բայց կուսակցության ղեկավարի հայդարարությունները պրամագծորեն հակառակ էին իր խոկ կուսակցության հոչակած ծրագրերին։ Օրինակ՝ Գ. Ծառուկյանը ուսական «O₂» հեռուստաթարձերության հարցազրույցում խոսեց, որ գլխավորը Ռուսաստանի հետ հարաբերություններն են, խոկ Եվրոպայի հետ հարաբերություններն իր խոկ խոսքերով՝ «չուր-չուր», մինչդեռ ԲՀԿ ծրագրում պրամագծորեն հակառակն է։ Ռուսաստանի մասին խոսք անգամ չկա։ Սա զավեցր է, որ բնութագրական է այս քարոզարշավի համար։

**Աննա Իսրայելյան
«Առավոտ» օրաթերթ
լրագրող**

Կասկած չի հարուցում, որ 2007-ին լուրջ դերակատարում կունենա ԲՀԿ-ն։ Փասլի այն է, որ ԲՀԿ-ն Հայաստանում երկու ազդեցիկ կուսակցություններից մեկն է։ Դա բացադրվում է մի քանի հանգամանքով. առաջինը՝ ընդդիմությունից հիասքափված լինելը, երկրորդը՝ սոցիալական խնդիրները և երրորդը՝ բաղաքական համակարգի չժևավորված լինելը։

**Երուարդ Շարմազանով
Հայաստանի հանրապետական կուսակցության մամուն խոսնակ**

«Քարգավաճ Հայաստանը», հաշվի առնելով, որ գոնի ֆորմալ առումով իշխանության մեջ տեղ չունի, առաջարկում է որոշակի այլընդրանք՝ ասելով, թե շատ բաներ փոխվելու են և սոցիալական, և տնտեսական ոլորտներում։ Եվ իհարկե իրավունք ունի որոշակի ավանդյուրիստական բաներ ասել, ինչպես օրինակ՝ թե Հայաստանը 10 տարի հետո միջին եվրոպական պետության պես կապրի։ Դա նաև պայմանավորված է նրանով, որ ԲՀԿ թիմը չնախարկում էր վերջին ամիսների ընթացքում։ Նրանք իրենց դիրքորոշումները, լոգունգները համաձայնացնելու ժամանակ չունեին, առանձնապես ցանկություն էլ չունեին, դա այնքան կարևոր չէ։ Փաստորեն իրենց քարոզչությունը ներկայացնող անձինք ամեն մեկն իր պարկերացումներին էր ներկայացնում՝ առանց համեմատելու։ Այս կուսակցության ներսում նկատում չեն լուրջ հակասություններ, որոնք ԶԼՄ-ներում նույնիսկ չեն շեշտվում, չեն

ներկայացվում համերությանը, քանի որ կուսակցությունը մեծ ազդեցություն ունի լրատվամիջոցների վրա։ Նկատի ունեմ, օրինակ, պրմ։ Ծառուկյանի ոչ բոլորին հայրմի հարցազրույցը մուկովյան «O₂» հեռուստաթարձերությանը, որին նա ասում է, որ «90%-ը Ռուսաստանին է, այն 10%-ով կամագործակցենք մյուսների հետ»։ Եվ սա այն դեպքում, եթե նոյն կուսակցության ցուցակում հայրմական դիվանագետ Ավետ Արոնցն ասում է, որ մենք պետք են հավասարակշռներ մեր հարաբերությունները և Ռուսաստանի հետ համագործակցությունից շեշտը կամաց-կամաց տեղափոխներ դեպի ՆԱՏՕ։ Այսինքն՝ այսպիսի բարերություններ և հսկակ իրար հակառակություններ կամ ծրագրերությունների միջև այնքան չկան, որքան ԲՀԿ-ի ներսում են։

**Քորիս Նավասարդյան
«Երևանի մամուլի ակումբի» նախագահ**

Իշխանական դաշտում նորամուծությունները սրանով չափավեցին։ Ընտրությունների նախաշեմին նորաթուիս ԲՀԿ իշխանական ուժի ձևավորմանը գուգահեռ կառուցվածքային վերաձևումներ էին տեղի ունեցել իշխանության հիմնական՝ «Հանրապետական» թևում, որը գործող՝ 3-րդ գումարման Ազգային ժողովում ամենամեծ խմբակցությունն ուներ։ Այն 2007-ի ընտրություններից դեռևս մեկ տարի առաջ իր ղեկավար կազմ էր ներառել Հայաստանի քաղաքական կարևոր դերակատարներից մեկին՝ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանին, որը ընտրություններից շուրջ 1.5 ամիս առաջ՝ ՀՀԿ նախագահ և Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարյանի վաղաժամ մահվանից հետո փոխարինեց նրան կուսակցության առաջնորդի, ինչպես նաև ՀՀ վարչապետի դերում։ Սերժ Սարգսյանի ներգրավումը կուսակցության մեջ նոր կառուցվածքային փոխակերպումների էր ներարկել ՀՀԿ-ն։ Նախկին պաշտպանության նախարարի հետ կուսակցական վերնախավ ընդգրկված տնտեսական տարրերի դիրքերն ամրապնդվեցին նաև ԱԺ ընտրությունների համամասնական ցուցակում։ ՀՀԿ-ի վետերան քաղաքական դեմքերից շատերը նախորդ ընտրությունների համեմատ նախընտրական ցուցակի հերթական համարում անկում ապրեցին՝ անցողիկ տեղերը զիջելով «թարմ» տնտեսական դեմքերին։ «Հանրապետականի» ներսում վերաձևումները դրսևորվում էին նաև միննույն ընտրատեղամասում մեծամասնական կարգով միանգամից երկու հանրապետականի առաջարմաբ, որոշ դեպքերում էլ ոչ հանրապետական թեկնածուին սատարելու՝ կուսակցության որոշմամբ։

ՀՀԿ-ի համար կուսակցության անդամներին «զցելը» դարձել է սովորություն: ՀՀԿ համամասնական և մեծամասնական ընդուրացուցակների հրապարակություն են եղել բավական ոչշագրավ փաստեր: Սպասվում էր, որ Շիրակի մարզում գյուղու 35 ընդուրագրածքում կառաջադրվեր ՀՀԿ խորհրդի անդամ, ԱԺ պարզամավոր Մարտին Սուրիհայանը: Սակայն նա ոչ միայն չի առաջադրվել այլև Սուրիհայանի անունն ընդգրկված չէ անգամ ՀՀԿ համամասնական ընդուրացուցակում: ... Գյուղին նաև ՀՀԿ-ի հենարաններից մեկն է եղել, և ինչպես ֆինանսավոր, այնպես էլ այլ մերոդմերով միշտ լրջորեն աջակցել է կուսակցությանը: Այնպես որ գոնեք գյուղի հեցիների համար զարմանալի է, թե ինչո՞ւ է ՀՀԿ-ն գերանից ժամանակ փոխում իր ծիրերը:

... Միայն Սուրիհայանը չէ, որ հայրենին է ՀՀԿ «սև ցուցակում»: Արմավիրի 19-րդ ընդուրագրածքում առաջադրվել է նաև ՀՀԿ անդամ Հակոբ Հակոբյանը՝ ճոյով, սակայն հարազարդ կուսակցությունն այնպիսի պաշտպանում է նրա հակառակորդին՝ գեներալ Սեյրան Սարգսյանի:

Արման Գալոյան
«Դժգոհություններ ՀՀԿ-ում»
«Հայք» օրաքերք²¹

Նույն ընդուրագրածքում կոնֆլիկտը չեղ լուծվել, և երկու հանրապետականներ՝ Սեյրան Սարգսյանը և Հակոբ Հակոբյանը, մրցակցում էին իրար դեմ: Եվ իշխանությունը վերջնահաշվում ստիպված եղավ որոշում կայացնել՝ նրանցից մեկին պրոցեսից դուրս մղելով. դա Հակոբ Հակոբյանն էր: Նմանադիպ դրսանելի և անդեսանելի երևոյթներ բազմաթիվ են լինելու, որովհետև դեղիր սահմանափակ են: Խոսքը գնում է ընթամենը 131 տեղի մասին, որն անշուշը իշխանությունն ամբողջությամբ չի կարող վերցնել, եթե անգամ նման հանրավորություն ունենար, դա իր համար արդեն վշտանգավոր է:

ՀՀԿ-ն անցյալ դրավա (2006 թ. – ենդ) ամրանից վերածվեց օլիգարքիկ կուսակցության, երբ Ա. Սարգսյանը լյուս օլիգարքների հետ միասին մուսքը գործեց կուսակցություն, և Անդրանիկ Սարգսյանի մահից հետո ամբողջությամբ վերցրեց այն: Այս երկու կուսակցությունները՝ ՀՀԿ-ն ու ԲՀԿ-ն, գործում են բացարձակական քաղաքական համակարգից դուրս, նրանք օլիգարքիկ դրավա գործություն են:

Սպյուսա Մաֆարյան
Աժ 2007 պարզամավորության թեկնածու
«Ժառանգություն» կուսակցություն

Այս պահին վաղամենովիկ վարչապետի քաղաքական պարագան դուրս եկալ դաշտից, այն ժամանակ, երբ վարչապետը դեռ ողջ էր, մենք այսպիսի միամշամակ պանդում չէինք կարող անել, որովհետև ամեն դեպքում նրա հեղինակությունը՝ ՀՀԿ-ում բավականին ծանրակշիռ էր, շատ ավելին, քան Ա. Սարգսյանինը, ել չեմ ասում, որ հանրապետականների հին գվարդիայի մեջ Ա. Սարգսյանը ընդհանրապես ընդունելի ֆիզուր չեր:

Հովսեփ Խորշույշյան
«Ժառանգություն» կուսակցության մամլո խոսնակ
քաղաքագետ

Նոր ձևավորված «Բարգավաճ Հայաստանը» և վերաձևված «Հանրապետականը» ներկայացնում էին Աժ 2007 ընտրական գործընթացում իշխանության իիմնական արսենալը: Իշխանության մասնակցությունն ընտրություններին ՀՀԿ և ԲՀԿ երկու խոշոր «բրենդով» հրաշալի մարքեթինգային հնարք էր, որով իշխանությանը հաջողվեց հանրության ուշադրությունը շեղել իրականում գոյություն ունեցող համակարգային հակառակորդների պայքարից և ընտրական գործընթացը հիմնականում ուղղորդել դեպի իշխանական ուժերի միջև պայքարի հուն:

Ընտրարշավի ընթացքում առանձնահատուկ էր ԲՀԿ-ի պարագան, որը ցուցադրում էր «իշխանությունից դուրս, բայց իշխանության հետ» կեցվածք: Մի կողմից, ընդդիմադիրների շարքում ծավոյալ իշխանականների առկայության ֆոնին «անկեղծ ոչ ընդդիմադիր» կեցվածքը միավորներ էր բերում այս ուժին: Մյուս կողմից, սակայն, նրա «ոչ իշխանական» կեցվածքը խառնաշխիթ էր հարուցում արդեն ողջ քաղաքական դաշտում, ինչը դարձավ իշխանությունների երկրորդ խոշոր հաղթարությը ընտրողներին ապակողմնորշելու գործում, քանի որ Հայաստանում բողոքական ընտրազանգվածի ծանրակշիռ մասը ընտրություն կատարելիս կողմնորշվում էր քաղաքական ուժի՝ իշխանական կամ ընդդիմադիր թերթ պատկանելությամբ, ինչը հասարակության ընկալումներում քաղաքական դերակատարներին բնորոշող կարևորագույն բնութագրիչն էր:

Իրականում ԲՀԿ-ն և ՀՀԿ-ն իմ գուավորությամբ ընդամենը սպասարկում են երկու անձանց՝ ՀՀԿ-ն Ա. Սարգսյանին, ԲՀԿ-ն՝ Ո. Քոչարյանին:

Հովսեփ Խորշույշյան
«Ժառանգություն» կուսակցության մամլո խոսնակ
քաղաքագետ

²¹ Խնտերնետային աղբյուրը գրքույկի տպագրության պահին հասանելի չէր:

Քանի որ քաղաքական համակարգը քայլայված էր, և հասարակության մեջ միտում կար զոն ինչ՝ որ ծնող պաշտոնական իշխանության հանդեպ որոշակի այլընտրանը տեսնել հասարակության մի զանգված, ի դեմք ։ Ծառուկյանի, տեսավ իր այլընտրանը, որի հետ կապված՝ մի զգալի մաս կույուկուրայի ծնող մրավ այդ կուսակցության մեջ։ ՀՀԿ-ի այլընտրանի զաղափարը ինչ՝ որ ծնող աշխափեց, այսինքն՝ բար էության, արմադական ընդդիմության ձեր բացակայությունը բերեց նրան, որ ԲՀԿ-ն ինչ՝ որ նիշա վերցրեց։

Երևանի Քողոյան քաղաքագիտ

Կար մի հսկակ էլեկտրորափ, որ ընդդիմության անգործության պարբառով անկերության էր մասկնակած, և ԲՀԿ-ն եկավ այդ էլեկտրորափին զրավելու։ Բայց ԲՀԿ-ն ծնվեց ոչ միայն վակուումից, ուս նաև հասարակական պահանջն էր։ Կուսակցությունը հայտնվեց և ուս առաջարկեց, իսկ թե ինչպես՝ իրենց իննիքն է. ի վերջո ցանկացած կուսակցության նապակակը իշխանության զալն է, ընդուրություններում հարթելն է։

Հայաստանը հետաքրքիր երկիր է, մեզ մոտ ընդդիմություն՝ իշխանություն հարակ երևում է միայն նախազարական ընդուրություններին։ Այօր ընդդիմադիր էլեկտրորափի զգալի մասը կարող է ճայն դալ և՝ ՀՀԿ-ին, և ԲՀԿ-ին։ Բայց 2008-ին ընդդիմադիր էլեկտրորափը շար դժվար է իշխանության թեկնածուին ճայն դալու։ Սա արտուր է, բայց այդպես է։ 2007 թ. ԱԺ ընդուրություններում ընդդիմության և իշխանության միջև պայքար չկա, կա ԲՀԿ-ՀՀԿ պայքար և ՀՅԴ-ի բոլոր թերթերը դրա մասին են գրում։ Եթե երկու սր կուսակցություններ են, ապա մյուսի (ԲՀԿ-ի – հեղ.) ցուցակներին նայելով հարակ տեսնում են, որ սա էլ է իշխանական։ Այսինքն՝ պայքարը 65–70%-ով իշխանական կուսակցությունների մեջ պետք է լինի այն դեպքում, եթե մեր երկրի 80%-ից ավելին ունի ընդդիմադիր կեցվածք։

Եղուարդ Շարժազանով Հայաստանի հանրապետական կուսակցության նամակ խոսնակ

Ես «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը չեմ համարում ընդդիմադիր ուժ, որովհետո մենք երբեք չենք ասել որ կողմ ենք հեղափոխության։ Մենք ընդունում ենք այն դրական զարգացումը, որ կա, բայց մենք ընդդիմադիր ենք այդ զարգացման դրևակերին։ Գլուխ ենք, որ համակարգային փոփոխություններ երկրում շար դանշադ են դեղի ունենում։ Ես առհասարակ իշխանություններին ընդդիմադիր չեմ տեսնում, քանի որ եթե ինչ խնդրեք աշել, թե օրինակ ՀԺԿ-ն, «Ազգային միաբանությունը» և լս 10–15

ընդդիմադիր կուսակցություններ ինչ այլընդրանը են առաջարկում, օրինակ, իշխանությունների վարած արդարին կամ ներքին քաղաքականությանը, ես չեմ կարող աշել։ Նրանք այնպիսի այլընդրանը, որն իր հենքով հակասն իշխանության ասածին, չեմ առաջարկում։ Նրանք ժողովրդին ասում են դուք զրավեք, մենք զանք, այդ ամենը մենք անենք։ Այսինքն՝ այսդեղ անձների փոփոխության խնդիր է դրված, իսկ դա իրական այլընդրանը չէ։ Իսկ մյուս ուժերը, որոնք առաջարկում են զաղափարական այլընդրանը իշխանություններին, չունեն հանրային վարակություն։

ԱԺ 2007 պարզամավորության թեկնածու
«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն

Ես շար եմ լսում «Բարգավաճ Հայաստան» ելույթները։ Այն կենդրուածիկ կուսակցություն է, ընդդիմություն չի։ Ընդունում են նախազարական սխալները, բայց չեն մերժում նրա առաջ քաշած խնդիրները։ Ամեն դեպքում այն ընդդիմություն չի։ Գ. Ծառուկյանն իսկապես բարի մարդ է։ Իր անվան շուրջ համախմբվեց 370 հազար մարդ, հավատացին նրան։ Նախազարական ինքն էլ գիրքն է, թե որ անձին կարելի է դնել կուսակցության դիմավար։ Մարդիկ հավատացին, գնացին։

ՀՀ քաղաքացի, ք. Երևան

«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը ընդդիմությունից ճայներ վերցնելու համար է սպեհծած։ Ժողովուրդը մեծ հավետով սկզբ 2–3 ամիսը գնաց այդ կուսակցությունը, ուր գնում էիր, ասում էին՝ «Բարգավաճ Հայաստան», «Բարգավաճ Հայաստան»։ Բայց երբ ժողովուրդն իմացավ, որ դա Ո. Քոչարյանի սպեհծած կուսակցությունն է, այլև են կա կանգնում, չեն ուզում գնալ։

ՀՀ քաղաքացի, ք. Երևան

Ընդհանուր առմամբ ընդդիմադիրների թուլացած դրությունը հնարավորություն էր տվել նույնիսկ իշխանական կուսակցիայի անդամ «Դաշնակցությանը» կիսարնդրիմադիր կամ «ոչ իշխանական, ոչ ընդդիմադիր» մարտավարական դիրք զրավել։ Այսպես, «Դաշնակցությունը» փորձեց ներկայանալ «իշխանության ներսում, բայց իշխանությունից դուրս» կարգավիճակով և իր հերթին վարում էր ընդդիմադիրներին բնորոշ քարոզարշավ։

Ակնհայր է, որ ինչ էլ լինի, ապագա միասնության մեջ նաև ՀՅԴ-ն ունի իր դիրքը։ Բայց նրա հանգամանքը մի փոքր յուրահարուկ է, քանի որ դաշ-

նակցությունը, 1998–ից ի վեր լինելով իշխանության մաս, այնուամենայնիվ իշխանության առաջին դեմքերի համար լիովին վարահենի կամ յուրային չի դաշնում, քանի որ հարաբերակամ ինքնուրույնուրյուն պահպանում է: Դրան գումարած՝ ամեն ընթրությունից առաջ արամենիր ցույց տալու ինչ–որ փորձեր է անում, այս անգամ էլ եղան նման արդարականություններ: Նկատի ունեմ Հայաստանի ՀՀԴ գերազույն մարմնի անդամ Սպարակ Մեյրանյանի հայրարարությունը, թե ընդդակեհծիքների դեպքում դաշնակցությունը դուրս կգա փողոց: Բնիք դրան չեն հավակում, իհարկե, որովհեկը աչքի առաջ ունեն 2003 թ., թե ինչպես կեղծիքներից հեկո նրանք մտան կուլիցիա: Բայց առում են՝ ասպանան ինչով չի կատակում, մեկ էլ դիսար նրանք 2008 թ. նախագահականից առաջ իրենք իրենց ինիստ հարաբերակամ ինքնուրույնուրյունը որոշեցին մի քիչ ընդարձակել:

Անա Խարայելյան
«Սուալուր» օրաթերթ
լրագրող

Հաշվի առնելով այն ռեսուրսները, որոնց գիրապերում է Դաշնակցությունը՝ այն մեծ դերակարարություն ունի և լրադաստիցոցներում, որոնց հետ հնարավորություն ունի աշխարելու, և նրանով, որ իրենց քաղաքական գործունեությունը վերջին փարիներին ոչիշով չի խոչընդունվի՝ ի փարբերություն ընդդիմադիրների: Այսինքն՝ իրենք բոլոր հնարավորություններն ունենի հասարակությանը ներկայացնել իրենց ծրագրերը և ճանաչելի լինել: Այս առումով նրանք ընդդիմություն չեն կարող համարվել այս ընդդական պրոցեսում: Բայց հաշվի առնելով հեռանկարները՝ ընդդիմություն դաշնակություն նրանց հնարավորությունը բավականին մեծ է, այս ընդդարձակի ժամանակ նրանց կողմից բավականին ընդդիմադիր կեցվածք և վարդ նկատվեց: Նրանք ոչ ընդդիմություն են, քանի որ ընդդիմությունը մեզ մոտ անպայման ձևված պերը է լինի ինչ–որ փուլում, ոչ էլ իշխանությունը, քանի որ իշխանության վերաբերման ծրագրում ապահովված դեղ չունեն:

Քորիս Նավասարդյան
«Երևանի մամուլի ակումբի» նախագահ

Ինչնէ, նման վերադիրբավորումներն ու «Բարգավաճ Հայաստան» կուսակցության շոնդալից մուտքը քաղաքական ասպարեզ ու մասնակցությունն ԱԺ 2007–ին՝ որպես հիմնական իշխանական «Հանրապետականին» այլընտրանք ու մրցակից, նաև ազդարարում էին իշխանության ներսում ընթացող կառուցվածքային նորամուծությունների մասին: Թեև

ՀՀԿ–ԲՀԿ մրցապայքարը նման էր արդեն իսկ անցողիկ միավորներ ունեցող թիմերի միջև նախօրոք պայմանավորված խաղի, այդուհանդերձ այս մրցակցությունը գալիք նախագահական ընտրություններից առաջ տնտեսական բուրգերի քաղաքական կշիռների ամրագրման խնդիր էր լուծում. գրանցված հաշվը որոշելու էր առաջատարին:

Այժմ իրար նկատմամբ ընդդիմություն հանդիսանում են ՀՀԿ–ն և ԲՀԿ–ն: Նրանք չեն մերժում տվյալ քաղաքական համակարգը, չեն մրածում սահմանադրությունը լավին է, թե ոչ այլ գործում են քաղաքական գործող կառույցի շրջանակներում: Եվ դա իհարկե հակամարդություն է: Այսիդ «Բարգավաճ Հայաստանը» ծնկել է, որպեսզի իշխանության մեջ իր համար որոշակի կրոր արանա, որպեսզի այդ խմբի համար նախագահի ընդդրություններից հեկո երաշխիք պահպանի: Նման երաշխիքի համար անհրաժեշտ է հանրային ռեսուրս, մեղիստեսուրս, քաղաքական կուսակցության ինֆրառեսուրս, որպեսզի խորհրդարանում ունենաս բավարար քանակով դրեներ, նախարարություններ, որպեսզի քեզ դուրս չհետքեն քաղաքականությունները և տնտեսությունները 2008–ից հեկո: Նրանք լրջորեն փորձում են դրան հասնել, իրենց մրցակցությունը «Հանրապետականի» հետ լուրջ պայքար ար:

Ակերսանդր Խոկանարյան
«Կովկասյան լրադաստիցոցների ինստիտուտի» տնօրին
քաղաքագել

Ականայիր է, որ Ոռբերդ Քոչարյանը նախագետում է Ազգային Ժողով 2007–ում ունինալ մի քանի իշխանական կուսակցությունն ՝ «Բարգավաճ Հայաստան» արհեստածին կուսակցության սպեկտրումը հենց այդ նպատակն էր հեկանադում: Քոչարյանի բազմաթիվ փորձերից հեկո հենց Գագկի Ծառուկյանի արեղծած խումբը դարձավ կամ համարվեց առավել կենսունակը, և նրան թույլ դրվեց մասնակցել քաղաքական պայքարին: Միաժամանակ, քանի որ պատգամավորական մանդամերը սակավ են, իսկ օլիգարքները՝ շատ, առաջացավ ընական մրցակցություն ԲՀԿ–ի և Հանրապետական կուսակցության միջև, ինչին խառնվելու փորձեր են անում դաշնակները և այլը: Բնական է, որ այս մրցակցությունը հենցագյուղ իր «աֆրեջուլերը» կցուցարերի խորհրդարանում, ինչը Քոչարյանի պատկերացմանը՝ իրեն հնարավորություն կրա հանդես գալ վերին արքիդրի կարգավիճակով: Այս նաև

այս կամ այն կողմի վրա կրեքի փոքր «կշռաքարը»՝ ենթադրաբար երրորդ՝ իշխանական կուսակցությանը կամ կուսակցություններին:

Աղասի Ենոքյան

«Ընկրություններ-2007. նախլնդրական շրջան»

http://www.echannel.am/?topic_id=81

Սարգի 5, 2007

ԲՀԿ-ն ի սկզբանի սրեղծվել էր, որպեսզի ապագա խորհրդարանում դաշն կազմի ՀՀԿ-ի հետ, սրա ապացույցն է նաև Ռ. Քոչարյանի հեռուստա-ելույթը, որտեղ նա նշեց, որ խորհրդարանում իրար հետ աշխատել կարող են իրար հետ համագործակցող, և ոչ թե առանձակառող ուժերը: Այս փոլում, սակայն, ինչքան էլ ԲՀԿ-ն և ՀՀԿ-ն ապագա դաշնակիցներ են և ինչքան էլ սա պայմանավորված բնիւթության շրջանակներում ընթացող իսաղ է, այ-նուամենայմիվ որոշակի մոցակցություն կա, թե ով ավելի շատ կհավաքի:

Աննա Խորայելյան

«Առավոր» օրաբերք

լրագրող

Վերջին 10 տարիներին սրացվեց այնպիս, որ իշխանության մեջ բյուրեղացումը կարարվեց բուրգի ներսում երկու ազդեցիկ թևերի տեսքով, և նրանց գլխին կանգնեց Ռ. Քոչարյանը: Իրենք բոլորը նորմալ ուղղաչիք հա-րաբերություն ունեն Քոչարյանի հետ, բայց թևերի միջև հորիզոնական հա-րաբերությունները խիստ հակասական են ու լարված: Իրենք համախմբում են միայն այն ժամանակ, երբ հասկանում են, որ բոլորը միաժամանակ կարող են ասպարեզից դուրս գալ: Մինչև ինքնապահապանան բնագիր այդ կերպ իրենք հակասություններ ունեն: մրածում են՝ ավելին կարողանակը պոկիլ: Բայց երբ Քոչարյանը տեսնում է, որ եկել է այն վրանիզավոր պահը, որ կարող է կորցնեն ամրությ, ամեն մեկին ատում է: «Խաղաղվեք, այսքան էլ ծեղ բավական է»: Այսինքն՝ ինքը նշուապի կարողանում է բալանը պա-հել: Բայց այդ կարուցվածքը չի պահպանի նախազահական ընդուրություններից հետո, որովհետք նոր իրողության՝ Սերժ Սարգսյանի նախազահության պայմաններում, լուրջ ազդեցություն ունեցող Գագիկ Ծառուկյանը խանգարելու է: Այս բախումն անխուսափելի է:

Եղվարդ Անդրիանյան

Հայաստանի ազգական առաջադիմական կուսակցություն

քաղաքական խորհրդի քարտուղար

Ողբերգ Քոչարյանը և Սերժ Սարգսյանը սահուն, առանց ցնցումների իշխանափոխության խնդիր ունեն, դրա համար պայմանավորվել են, որ հա-

ջորդ նախազահը պիտի լինի Ս. Սարգսյանը: Խնդիրն ընդամենը այն է, թե Ս. Սարգսյանը ինչպես պիտի դառնա նախազահ՝ բացառապես իր և իր կու-սակցության ջամփերով, թե Ռ. Քոչարյանի օգնությամբ: Իրենք պայմանա-վորվել են, որ Ս. Սարգսյանը պիտի դառնա նախազահ, իսկ Ռ. Քոչարյանը պիտի շարունակի պետքության կյանքում շատ կարևոր դեր խաղալ: Չէ՞ որ ինքը հայրարարեց: «Ես ամենաջահել բոշակառուն չեմ պատրաստվում դառնալ»: Նա բոշակի գնալ չի պարրապվում, զիրական աշխատանքով զբաղվել չի պարրապվում, որենական պիտի հշխանական լծակներ ունենա, իսկ իշխանական լծակներ կարող է պահպանել միայն այն դեպքում, եթե Ս. Սարգսյանը իրեն պարագավորված զգա, որ Ռ. Քոչարյանի շնորհիվ է դար-ձել նախազահ: Դրա համար էլ «Բարգավաճ Հայաստան» են մկցրել խաղի մեջ, որ այն ԱԺ-ում մեծ ուժ լինի և ներարկվի ոչ թե Ս. Սարգսյանին, այլ Ռ. Քոչարյանին, որպեսզի վերջինիս հանկարծ խաղից դուրս չըռդնեն:

Արմեն Բաղդասարյան

«168 ժամ» թերթի փոխխմբագիր

քաղաքական մեկնարան

Աժ մարտարուում նախանշվում էր Հայաստանի ապագա քաղաքա-կան, ուրեմն և տնտեսական տիրապետության խնդիրը, ինչը հանրու-թյան շրջանում թեմացնում էր ՀՀԿ-ԲՀԿ մրցապայքարի զգացողությու-նը: Նախընտրական շրջանում ԲՀԿ տարածքային շտաբերից մեկի մոտ տեղի ունեցած պայթյունը ևս ՀՀԿ-ԲՀԿ պայքարին անուղղակի սրու-թյուն հաղորդեց: Իշխանական բուրգի հենայաների միջև հնարավոր բախումը մի կողմից մտահոգությունների տեղիք էր տալիս, թե կարող է հանգեցնել սիցիլիական այումեռ հետևանքների, մյուս կողմից տպավո-րություն էր ստեղծում, թե իշխանությունն ինքն իր ներսում հակալիքին-երի մեխանիզմ է ձևավորում, ինչը կարող էր հուսադրող գործոն դառնալ քաղաքական համակարգի առողջացման և արդար ընտրություններ անցկացնելու համար:

Դեռևս նախընտրական ընթացքը նորմալ է անցնում, անհանգստացնում են միայն նախընտրական պրովինցիաները, օրինակ՝ ԲՀԿ-ի դեպքը: Դրանք այն ուժերն են, որոնք շահագրգուժ չեն, որ Հայաստանում քաղա-քական ընդուրություններ և կայուն զարգացում լինի: Չեմ կարող ասել՝ ով-քեր են: Հնարավոր է՝ քրեածին ուժերն են, որոնք չեն ուզում՝ Հայաստանը նորմալ զարգացում ունենա: Բացի այդ, կաև ուժեր, որոնք չեն ցանկանում

Էվլուսիոն ճանապարհ, և Ապարակ ունեն ԲՀԿ-ՀՀԿ անջրապետը լրեսանելի դարձնել:

Եղուարդ Շաբամազնով Հայաստանի հանրապետական կուսակցության մամլ խոսնակ

Կարծում եմ, որ կլինի շատ քեժ պայքար մեր լրմրեսական խմբերի միջն, որը կարող է արդահայրի ցանկացած չենով՝ կրակոցներ, ծեծեր, ջարդ ինչ ասեն կարող է լինել որովհետ այսրեղ լուրջ շահեր են բախվում: Բայց այն, որ մենք արդյունքում կարանանք ամենաարդար ընդուրությունները, կասկած չեն: Իրար վերահսկելու, ծեծելու արդյունքում մենք կարանանք արդար ընդուրություններ, և ես չեմ զարմանա, որ լրմրեսական խմբերը իրար մեջ վերաբաշխվեն:

Եմ ամենամեծ մրգավախությունն այն է, որ այդ ջարդերի լրոկուր զգերացանցի մի սահման, որից հետո պրոցեսը դառնա անկառավարելի, որովհետ ինարավոր է, որ վերևներում պայմանավորվածություն լինի, բայց անբաներն անկառավարելի լինեն:

Տիգար Ջրաշյան AEPLAC հայաստանյան գրասենյակի ղեկավար դեսպանագել

Դժվար է ասել թե այս կոնֆլիկտում ով կիաղթի, երկուսն էլ հաղթելու և կործանվելու շահսեր ունեն՝ կախված նրանից, թե ով գրագել չենով այդ քայլերը կանի: ՀՀԿ-ն գրագելը քայլեր անելու ավելի մեծ հնարավորություն ունի, որովհետ բացի կառուցվածքներ ունենալը, այլ կարծիք լսելու նրանց ունակություններն ավելի մեծ են: Մինչդեռ ամեն դեպքում ես շատ դժվարությամբ եմ պարկերացնում, որ ԲՀԿ-ում ազատ, անբռնազրուիլ բանավեճ գնա, կամ որևէ մեկը լծակ ունենա կուսակցության ճախազահին անկեղծությամբ ասելու «այս ինչ ես անում»: Նաև այս պարմառով է ԲՀԿ-ն ավելի խոցելի:

Այսրեղ գնում է կյանքի ու մահվան պայքար: Ամեն մեկը հասկանում է, որ պարբելմ ուղղակի պարզվել չէ, որ արժանապարփռեն ընդունի մյուսի հաղթանակը: Այսրեղ հակայական միջոցներ են մարդկանց մուր գոյանում: Հայաստանը բավականին փոքր է, ու այնքան զայրակղիչ շարերի համար, որ ամեն մեկը մրածում է՝ միանգամբ սեփականաշնորհի ու լինի դրա դերը:

Եղուարդ Անդիմյան Հայաստանի ազատական առաջադիմական կուսակցություն քաղաքական խորհրդի քարտուղար

Այսօր մենք ունենք երկու ուժ, որոնք համարյա նոյն գեղից, նոյն իշխանական թերթից են ղեկավարվում, և իշխանությունը պիտի կիսեն իրար մեջ: Մինչդեռ պիտի անայսման լինի դրանց հակադիր բնեուք, որը ոչ մի կերպ չի ձևավորվում: Դա հենց իշխանության է պետք, որովհետ ցանկացած երկրում քաղաքական դաշտը պիտի հավասարաշղոված լինի, և եթե հակադիր՝ ընդդիմադիր բնեուք լուրջ ձևավորված չէ, իշխանության մեջ է պայքար առաջանում, ակտում են «իրար խիել»: Այսինքն՝ սկզբում է մրցակցություն, որն անվերահսկելի է, ու պարզ չէ, թե ինչ է, օրինակ՝ Գյումրիի քաղաքապետի մահավորձը:

Միևնույն է՝ երկու բնեուանոց իշխանություն լինել չի կարող, որքան էլ նրանք իրար ընկեր լինեն, վերջում մի իշխանությունը մյուսին պիտի ոչնչացնեն: Եթե ընթանալու է այս ճանապարհով և չի հայդնվելու երրորդ ուժ, այս երկուսից մեկը պիտի ճանապարհ բացի: Ավելի մոռայ սցենար չեմ ուզում ասել չնայած լուրեր կան, որ Սերժ Սարգսյանն ուզում է Վազգեն Սարգսյանի դեր խաղալ²², բայց ավելի զգուշ ու մրածված, բայց ես այնքան չեմ վարահում դրանց հավասպիտությանը:

Եթե լավագենորեն գրամադրվենք, գուցե ժողովուրդը ՀՀԿ-ԲՀԿ մրցակցությունից շահի, բայց դրա հետ շատ մեծ հույսեր շարժե կապել:

Հրաման Տեր-Արքահամայան ԱԺ 2007 պարզամագորության թեկնածու «Իմպիչմենտ» դաշինք

Իշխանական ուժերի միջև մրցակցությունը, այդուհանդերձ, Ֆինանսավարչական հնարավորությունների մրցության ընույթ ստացավ և աչքի չընկավ համակարգային բարեփոխումների դիսկուրսով: ՀՀԿ և ԲՀԿ նախընտրական վարչագիծը հուշում էր, որ մրցապայքարը մնաց ընդամենը միննույն համակարգի ներսում դիրքեր գրավելու շրջանակներում, ուստի չէր կարող հանգենել համակարգային փոփոխությունների:

²² Վազգեն Սարգսյանը 1990-ականների Յայաստամի գլխավոր քաղաքական ներակատարներից էր, ում իշխանությունը չէր սահմանափակում ֆորմալ կարգավիճակով: 1999-ին, երբ նա պաշտոնավարում էր ՀՀ վարչապետական աթոռը, ԱԺ-ում ահարեւշական հարձակման ժամանակ սպանվեց Աժ խոսնակի և 7 պատգամավորների հետ միասին: Յանարփում է, որ Վերջին շրջանում նա ծգտում էր կարգի բերել Յայաստամի քաղաքական համակարգը:

Դավիթաշենում ակնիայի հակամարդություն կա նաև ՀՀԿ և «Քարգավաճ Հայաստան» կուսակցությունների միջև: ԲՀԿ նախընդրական շրաբը դեկազրում է նախկին համայնքակեր Ռուբեն Գևորգյանը: Նախկին և գործող քաղաքիկերի հարաբերությունները վաղուց են լարված: Երկու շրաբերի պետքերը յուրաքենակ մրցակցության մեջ են, քեզ ով ավելի շատ մարդ կհավաքի իր կուսակցության հանրահավաքի ժամանակ: Եվ ինչպես ցուց դեպքի ընթացքը, երկուսին էլ հաջողվեց հազարից ավել մարդ հավաքել Դավիթաշենի կենտրոնական հրապարակում: Հանրապետականը օգտագործեց աղմինհավաքիկ ռեսուրսը, իսկ ԲՀԿ-ականները հրապարակը լցրեցին զյուղերից ավորումներով լրեղափոխած մարդկանց հաշվին:

Հասմիկ Մեսրոպյան

«Լուլիկը նայած խաչքառ Եր լուծում...»

http://www.e-channel.am/?topic_id=565

Սայի 4, 2007

Այն բվացյալ հակասությունները, որ կամ ՀՀԿ և ԲՀԿ կուսակցությունների միջև, իմ կարծիքով արհենարական են, ամրոջովին կառավարելի, և միշտ վճռական պահին, երբ զա իշխանության փոխվելու կամ մնալու հարցը, այդ երկու ուժերը սերդ համագործակցելու են այն ուժերի դեմ, որոնք իրական հեղինակություն են վայելու ժողովրդի մեջ և իրենցից իրական այլընդրանը են ներկայացնում գործող ռեժիմին: Այնպէս որ որևէ բարձակի խնդիր են այնպիսի չեմ դեմում: Կա միասնական մի քիմ, որն ուղղակի երկու դեմք ունի:

Հովսեակ Խուրչույյան

«Ժառանգություն» կուսակցության մամլո խոսնակ

քաղաքագետ

Ինչ Ռ. Քոչարյանը և Ս. Սարգսյանը իշխանության մեջ են, իսկ ակցություններ կան, որ իմաս իրար ինչ-որ քան են անենու: Բայց չի բացառվում, որ նրանք երկուսն էլ այդ խաղը վերահսկում են և հենց իրենքն են բաց բողոքում այդ լուրերը: Հիմա կա «Քարգավաճ Հայաստան»՝ որպես նախագահական աղմինհավաքիայի պրոյեկտ, և կա «Հանրապետականություն» առաջ զնալու փորձ: Եվ բոլորին պարզ է, որ այդ պրոեկտները որոշակի պայմանավորվածության մեջ են:

Հրանտ Տեր-Մրրահամյան

ԱԺ 2007 պարզամտավորության թեկնածու

«Իմպչմենտ» դաշինք

ՀՀԿ-ն և ԲՀԿ-ն՝ իշխանությունը որպես այդպիսին՝ որպես համակարգային երևոյթ, լիովին բավանավորված է: Նրանք եղած համակարգը պահպանելու խնդիր են դնում: Նրանք հակալշու են այն առումով, որ բարբեր անձիք և բարբեր խմբավորումներ իշխանության ներսում կարող են բարբեր խնդիրներ ունենալ՝ և նախագահական ընդուրությունների, և հեղազայում կառավարության ձևավորման հետ կապված, բայց մեծ իմաստով նրանք լուծում են այդ համակարգի վերաբարդության խնդիրը: Անձերի գուղափոխման խնդիրն իրենց համար նշանակություն ունի, բայց համարակության համար՝ մեզ համար, մեծ իմաստով որևէ նշանակություն չունի:

Քոյին Նախարարյան
«Երևանի մամուլի ակումբ» նախագահ

Հիմնական քաղաքական ուժերի նկրտումներն իրենց ազդեցությունն ունեցան ողջ ընտրարշավի բնույթի և ընթացքի վրա. զաղափարական դեբատների փոխարեն այն դրսնորվեց իշխանական ուժերի շտաբերի, գովազդող պատառների և դրոշակների առատությամբ, կուսակցականների լայնածավալ անդամագրությամբ, հանդիպում-հավաքներին բերվող մարդկանց բազմությամբ և բազմարնույթ նախընտրական բարեկործական ակցիաներով: «Թրանսփարենսի ինթերնեշնլ-Հայատան» հասարակական կազմակերպության մոնիթորինգի տվյալներով «Քարգավաճ Հայատանը» և ՀՀԿ-ն նոյնիսկ գերազանցել էին Ընտրական օրենսգրքի 112.4 հոդվածով նախընտրական քարոզչության իրականացման համար թույլատրված 60մլն դրամը:

Կազմակերպության հաշվարկների համաձայն, միայն Երևանում, Գյումրիում և Վանաձորում, քարոզական նյութերի և նախընդրական միջոցառումների վրա ՀՀԿ-ն ծախսել է 79.1 մլն դրամ, ԲՀԿ-ն՝ 129.6 մլն դրամ:

Մոնիթորինգն իրականացնելիս կազմակերպության աշխարհիցները հաշվել են կուսակցությունների օգտագործած ցուցապատճենները, գովազդային վահանակները, գրիչները, շապիկները, կազմակերպած համերգները:

«Մենք շատ, այսպէս ասած, «մեղմ» ենք մուղեցել՝ հավաքացել ենք կուսակցությունների խոսքին, որ երգիշ-երգչուիհները, բացի իհարկի Ուսուարդանից ժամանածները, անվճար են մասնակցում քարոզարշավներին, հավալացել ենք, որ կուսակցությունների շրաբերում մարդիկ կամավոր են աշխարհել և չեմ վարչապրվել, հավաքացել ենք, որ պարանորուր ծրի է եղել բայց միևնույն է, այս պարկերն է արացվել», – ասում է Ամալյա Կու-

դրանքի մասին: Նա վարահ է, որ իրենց մոնիթորինգը կուսակցությունների ոչ բոլոր ծախսերն է արդաշողում և հիշեցնում է, որ իրենք ընդամենը երեք քաղաք են դիմարկել:

«Թրանսպարենտի հնքերնեշներ ՀՀԿ-ն և ԲՀԿ-ն նախընդունական քարոզության համար բույլապրոֆած 60մլն դրամից ավելի են ծախսել»

http://www.e-channel.am/?topic_id=809

Սայսի 31, 2007

Մարդու իրավունքների մի պաշտպան ասում է, որ «Քարգավաճ Հայաստան» կուսակցության «քարեգործական» գործողությունները համարժեք են դարձել հշուղ Հայաստանի Հանրապետական կուսակցության կողմից վարչական միջոցների կիրառմանը: Սա «անցյալի դեպք չէ», ասաց «Հեղսինկյան Քաղաքացիական Ասամբլեա» իրավապաշտպան կազմակերպության Վանաձորի գրասենյակի նախագահ Արքունիցը:

Այս կուսակցությունը (Հայաստանի Հանրապետական կուսակցությունը – հեղ.) նաև օգտագործում է իր ներկայությունը կրթական համակարգում ու դպրության կառավարական գործակալություններում «բնակչության վրա ճնշում գործադրելու համար, որպեսզի այն աջակցի Հանրապետական կուսակցությանը», ավելացրեց Սարունցը: Պետական աշխատողներին Հանրապետական կուսակցության հավաքներին ուղարկելու մասին պատմությունները ընկրողների շրջանում դարձել են սովորական երևույթ:

Մարիամնա Գրիգորյան

«Դիմորդները Հայաստանի ընդունակավում արձանագրում են թե՝ իմնախանդիր, թե՝ հուսադրող հանգամանքներ»

http://www.eurasianet.org/armenia/news/050907a_arm.html

Յանձնացած որակում կարելի է լրացնել կուսակցությունների գործունեությանը, բայց դրանք դրւում են քաղաքական գործունեության համար ենթադրվող պիրույտներից: Դրանք ապաքանագրական ուժին են, որոնք այսօր ցանք սրբի հենց քաղաքական համակարգի առանցքն են կազմում: Այդ ուժինի իմնախանդիրը գործունեության գրեսակը քաղաքական քարեգործությունն է: քազմաքիլ օրինակներ կարելի է բերել՝ սկսած «Քարգավաճ Հայաստանի»՝ կարգութիւն սերմացուի, մեղվախեթակների բաժանումից մինչև Հանրապետականների պարագայում՝ բնակչարանների և լինուալիտություն և այլ նյութական և ոչ նյութական արժեքների դրամագրություն:

Սպյուս Մաֆարյան

ԱԺ 2007 պարզամափորության թեկնածու «Ժառանգություն» կուսակցություն

